de la Revue Arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitaristes
à VIENNE
VII Méchitharistingasse

ԱՐԵՒԵԼԵԱՑ ՄԱՄՈՒԼ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

23 ՐԴ ՏԱՐԻ

1898

ԹԻՒ 4 — 15 ՓԵՏՐՎԱՐ

ԽՄԲԱԳԻՐ-ՏՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԵԼՄՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 121
ԳԱՂՏՆԵԼՈՅՁՆ ՆՈՐՆՆՅ (Գ. Կ. Յակոբեան) . . . 125
ՄԱՆՈՒԿՆ ԵՒ ԻՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ (Նազարէթ Ներսէսեան) 130
ԱԼՖՕՆՍ ՏՕՏԷ 136
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ (Տօքթ. Կ. Յ. Փաշաեան . . . 142
ԴԱՒԱՃՆԵՐ (Թ. Խանճեան) 145
ԸՐ. ԹԱԳՈՒՀԻ ՏԱՄԿԱՃԵԱՆ 146
ՍԻՐՈՅ ՔՄԱՀԱՃՈՅՔՆԵՐ (Յովհաննէս Գազանճեան) . 147
ՈՒՏՈՂՆԵՐ ԵՒ ՈՒՏԻՈՂՆԵՐ (Գէորգ Խորասանճեան) . 148
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (Ս. Ամատեան) 150
ԵՐԿՈՅՔ (Ռ. Որբերեան) 152
ՊԱՏՃԱՌԸ ԻՆՉ Է (Գ. Խ.) 155
ԼՐԱԲԱՂ 153
ՆՈՒԷՐ 160

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Պատրաստ է տպագրած է

ԳՐՊԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՕՐԱՑՈՑ

Հրատարակութիւն Զ. Թորոսեանի.

ՄԱՆՐԷԱՐԱՆՈՒԹԻՒՆ. — Գրեց Տօք. Ն. Տ. Ալպատրեան, Կ. Պոլիս. Տպագր. Նշան Պէրպէրեան 1898 — Գին 10 դրուշ.

ՄԱՐԴՈՒ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ. — Գրեց Վ. Հ. Շահրիմանի; հրատարակիչ Գ. Տ. Հաճիէեան Խուտաւք. — Գին 50 սանթիմ.

ԳԻՐՔ ԳՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ. — *Նորաձև հեղինակներուն ուղեցոյց մը կարևոր տեղեկութիւններ.* գրեց Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիշեան, *յաւելուած գրքը կարդալու արուեստը:* Վիէննա Մխիթարեան Տպարան 1898 Գին 1 Ֆր. 25 սանթիմ.

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ Վ.ՐԱՅ *Ժողովրդական դասեր.* — *Հետևողութեամբ Հ. Գաբրիէլ Զօհրապ. Հրատարակութիւն Գաբրիէլեան Գործակալութեան,* տպագր. Ն. Ծ. Աբրահեան 1897 գին 3 դրշ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ *Արդի աշխարհաբարի.* Ա. *գիրք.* — Զաքէոս Տանիէլեան, Կ. Պոլիս տպագր. Մատթէոսեան 1897 գին 3 դրուշ.



ԿԻՍԱՄՄԵԱՅ

ԹԵԼ. ՏԱՐԻ

ԹԻ 4 15 ՓԵՏՐՎԱՐ 1898

ՄԵՐ ԵԼՍՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ընտարակոյս նոր ու անլուր իրողութեան մը լսարերը չպիտի համարուինք՝ եթէ պնդենք որ մեր ազգային անտեսական ու եկմտական վիճակին՝ ոչ աննման աւ հասարակ անհատականին, բաւական ծանր և ողբալի է։ Ցնտեսական տագնապէն չատ առաջ՝ արդէն քայքայուն ու տարտամ, այժմ բոլորովին յուսահատական կերպարան մ՚առած կ՚երևի այդ վիճակը։

Երբեմն ազգային անտեսական և եկմտական մտատկարարութեան անկարգութիւնը կը վերագրուէր այն դըրութեան որ ափլոյական կ՚կոչուէր, թէև այս իրաւ է, որ եթէ մէկ կողմէ վարչային գործերուն մէջ վնդծուածներ անպատկաս էին, եթէ մէկ ձեռքով եղած բարեգործութիւնները, միւս ձեռքով անշահ և անխոստովանելի կերպերով կ՚փոխարինուէին, բայց մեծատուն ու սեղանատ ալ՝

անձնական հակառակութեան ու նախանձու բերմամբ, երբեմն իրենց քսակները կ'բանային յօգուտ եկեղեցական ու տոհմային հաստատութեանց և հասարակութեան վրայ դրամական պահանջումներով կամ տուրքեր դնելով չէին ծանրանար։ Իսկ այժմ ո՞ր մարմնոյն պարտ է վերագրել ազգային եկամտից անկանոն վիճակն։ Ո՛վ է մեղաւորն. ազգային իշխանութի՞ւնը թէ ոչ ժողովուրդը։ Ըստ մեզ՝ թէ մին և թէ միւսը։ Յահմանադրական դրութեան հաստատութեամբ միամիտ ժողովուրդն, նայն իսկ լուսաւիտ անձնաւորութիւնները այնպէս կ'երեւակայեին որ տոհմային հիմնարկութիւններն, եկեղեցի, հիւանդանոց, դպրոց, պաշտօնատուն, վանք, առաջնորդարան, ամեն բան՝ որ ժողովրդեան նիւթական, բարոյական ու մտաւորական զարգացման հետ կապ ունէր, ուղիղ, կանոնաւոր և արդիւնաւոր կայութեան մը վերածուելով՝ հայերն նոր օր, նոր լոյս պիտի տեսնեն և անընդհատ յառաջդիմութեան ճամբան պիտի մտնեն, իսպառ դատապարտելով այն ամիրայական, իշխանական կամ բռնանասիրական ուղղութիւնն, որով այնքան երկար տարիներ տնօրինած էին հայոց թաղային, դաւառական, վանական և այլ գործերն։ Եւ ի՜նչ եռանդով, ի՜նչ ոգևորութեամբ բռնկած էին օրագիր, գրիչ, դրագէտ՝ միահամուռ ողջունելով օրինագիր մ'որու դէմ հարկաւ հին գլուխները չէին դադրեր դաւադրելէ, ինչպէս սովոր են դաւադրել ամեն ուրեք ժողովրդեան միամտութեան և տգիտութեան մէջ ճարակ ու չահ վնտռտող դիմակաւոր սուտ ազգասէրներ։

* * *

Սակայն քանի՞ ամիս, քանի՞ տարի տևեց այդ ոգևորութիւնն յանուն օրինաւորութեան և կանոնաւորութեան, քանի՛ քանի՛ ծրագիրներ և հիմնագիրներ յօրինուեցան ճշմարտապէս անկեղծ, տոհմասէր և բանիբուն ազգայիններէ՝ որոց մէկ քանին տակաւին կենդանի են, նախ՝ ազգային եկամտական վիճակն, ամեն բարոյական և

նիւթական բարւոքման էական պայմանն, կանոնաւոր դպրոցներ վերածելու և ծախուց ու մուխ մէջ հաւասարակշռութիւն հաստատելու նպատակաւ, ապա թանկ քան քիչ կրթական, վանական, տնտեսական խորհուրդներ ու կանոնադիրներ կազմուեցան, որպէս զի թէ թաղային և թէ գաւառային դպրոցներն, վանքերը, հողային ու անշարժ կալուածներն ապահովուին և արդիւնաւորին։ Այս հիմնադիրներէ ո՞րն լիուլի գործադրութեան երթս տեսաւ, ո՛րքան ժամանակ Աղգ· Պատրիարքարանն իր ելից ու մուխ մէջ կատարեալ հաւասարակշռութեան շնորհը տեսաւ։ Երկար աշխատութեամբ և աղգային անհրաժեշտ պիտոյից դիտակցութեամբ՝ ձեռնհաս անձնաւորութեանց և ելմտադէտ մասնաժողովներու կողմէ պատրաստուած ստուար տեղեկագրեր, յայտագրեր և ելմտայոյզներ դիւանատան դարակներու մէջ ցեցակեր եղան։ Ալանեաններու, Ռուսինեաններու, Նէվրուզեաններու և այլոց անձանձիր տքնութեամբ լոյս հանած, ընդհանուր ժողովներու հաւանութեամբ վաւերացած և գործադրութիւնն հրամայուած այնքան թղթեր կամ չուրն ընկան, կամ բարձի թոզի եղան։ Եւ ինչո՞ւ համար։ Առաջին ու գլխաւոր պատճառն էր ժողովրդեան պարտազանցութիւնն, երկրորդ՝ վարչային մարմնոյն թոյլ ղեկավարութիւնն և անտեղի թոյլտուութիւնն, թաղային խորհուրդներու տեղական դէուէ նկատումներն, և ի վերջէ՝ բարոյական զօրութենէ տարբեր իշխանութեան մը չգոյութիւնը, իշխանութիւն՝ որ օրինաց գործադրութեան վաւերացումն է։

Երբ քուէարկուն իր իրաւունքը կ'պահանջէ առանց իր պարտքը կատարելու, և երբեմն իրաւունքէն զրկուելու չափ պարտազանց դանուելու կ'նուաստանայ, երբ վարչութիւն մը հպարտաբար իր իշխանութիւնը վարելու պարտաւորեալ անհոգ կը դանուի ոչ միայն իր բարոյական, այլ և իր օրինական սահմանադրիչներն ի գործ դնել, երբ իր իրաւասութեան ներքև դանուող ժողով և խորհուրդ ինքնուրոյն և անկախ կ'անօրինեն ամէն բան և համարա-

տուրթենէ կ'խորչին, բնականապէս ազգային կամ ո և է իշխանութիւն լոկ անուանական կ'դառնայ և ամեն գործ ըստ հաճոյս կամ ըստ դիպուածոյ կ'քալէ՝ և այս խառնակութեան մէջ ուրիշ ճար չմնար հանրային ծախուց քիչ շատ հասնելու այլ միայն հանգանակութիւն կամ մուրացկանութիւն։ Իսկ ազգային սեփհականութիւն, հող, եկամուտ, վանք, գպրոց և եկեղեցի՝ այս դրամական անանկութեան միջոցին, զարմանք չեն եթէ կորստեան կը մատնուին։ Իրրև անհատ մը՝ չէ կարող վարչութիւն մ'ապրիլ օրն օրին, այլ պարտէ ունենալ՝ ինչպէս ամեն օրինաւոր տուն, ընկերութիւն և ո և է հիմնարկութիւն կանոնաւոր եղմտայոյց մը՝ որպէս զի պարտք պարտքի վրայ բարդելէ, ատոր անոր ձեռք կարկառելէ զերծ մնայ և գոնէ իր անհրաժեշտ հանրային պիտոյքը հոգալէ դատ պահէ պահպանէ և արդիւնաւորէ այն ամեն միջոցներն որ կրնան հարստութեան նորանոր աղբիւրներ գառնալ։ Թերևս նման վայրենիին՝ անգէտ և ապուշ՝ անգին հանքերու վրայ ոլորմելի կեանք մը կ'վարէ՝ մերկ ու անօթի, ազգային մարմինն, անփոյթ և անհոգ, անթիւ վանքերու, թատրոն, անմշակ և անարդիւն սեպհականութեանց և ճոխութեանց մէջ՝ և չարունակ ատգիս անգին որս, ոլորմութիւն, նպաստ ու օգնութիւն որոնելով կ'յուսայ անուսանել իր վտիտ էութիւնն, որ անշուշտ հետզհետէ պիտի իսպառ հալի ու մաշի եթէ իր տնտեսական և եղմտական գործառնութեանց մէջ հիմնական կանոնաւորութիւն, շահաւէտ մատակարարութիւն մը չհաստատէ, և եթէ վերջապէս ամեն անհատի չզգայնէ թէ իր առաջին ու էական պարտաւորութիւնն է մանակից գտնուիլ հանրային ծախուց վոխանակ իր դրամն ատգին անգին թափելու՝ ինքնակոչ և անպատասխանատու պաշտօնէից գրպանը։

Եւ քանի դիւրին է՝ ազգային հաստատ եղմտացոյց մը՝ տոհմային արդի պիտոյից համեմատ՝ չինել, եթէ միայն ամեն հայ իր պարտքը կատարելու դիտակցութիւնը ունենայ և Ազգ. վարչութիւնն ալ իր իրաւասութիւնը ի գործ դնելու կամքը։

ՊԱՊՏԱՀԱՊՈՒԹԻՒՆ ԱՌՔԱՅԻ

Ե.- ԱՆՀԵՏԱՑԱՆՔ ՄԱՆԵԱԿԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

(Անջատ Պատմութիւն)

Շաբաթ դիշեր՝ Արեւելեան Ակումբին առաջին երեկոյթը — ընտանեկան, փայլուն ու շատ ոգեւոր համախմբում մը — գացած և հետևարար յոգնած ու քնատ ըլլալուս, երկրորդ առաւօտ՝ օրն ալ կիրակի՝ շատ ուշ ելայ երազանքէս, — անկողինէս ըսել պիտի ուզէի: Կէսօրին քառորդ կար երբ վերջն վար իջայ, գլխարկս առի և հագիւ սկսեր էի զայն խոզանակել՝ դուրս ելնելու պատրաստուելով, երբ յանկարծ ապակիէ դռնաթևէն նշմարեցի բարեկամս Ջարէհն որ մատովը ապակիին կը զարնէր:

— Աստուած բարին ընէ, պոռացի դուռը բանալով, ի՞նչ կայ առաւօտ առաւօտ, ա՛, ներէ, կէսօր է իրաւ:

Ջարէհ՝ ներս մտաւ խնդուքներս և դաւազանն ու գլխարկը գետեղեց գլխարկակալին վրայ:

— Հի՞մակ կ'արթննաս, չե՞ս ամչնար, Թորգոմ, ըսաւ սակայն նախ և առաջ, խօսք Մարիղիդ որ իր պատրաստած առնուշեղենէն բերէ մեզի:

— Ի՞նչ անուշեղէն, լուր չունիմ, ըսի:

— Մե՛ղք քեզի, տունիդ մէջ կ'ապրիս ու հոն դարձածէն լուր չունիս:

— Ի՞նչ գիտնամ, բարեկամ, տունին մէջ միս մինակ եմ և դեռ հիմակ վերէն վար իջայ: Թերևս Մարիղն անակնկալ մը պատրաստած է ինձ, բայց դուն ո՞ւր իմացար:

— Ի՞նչպէս չհասկնամ, եղբայր: Գետինը՝ մարմարիոնին վրայ՝ մերկ, կոշտ ու աղտոտ ոտքերու նշաններ կան մնացած, անշուշտ ձեր հացագործին պաշտօնեայինն է, քանի որ հացանիչին վրայ՝ ղոր աղաթինդ ամէն սպասուհիի պէս գլխարկակալին վրայ է մացեր՝ դանակի թարմ կտրուածք մը կը նշմարեմ, բայց ո՛չ հացերու չարքին վրայ՝ այլ վրայի կողմը:

Յետոյ պոռաց·

— Մարիղո՛, եփածէդ քիչ մը բեր մեզի:

Արդարև շատ մեծ եղաւ զարմանքս երբ պատաւ խոհարարուհիս քանի մը կտոր տաք տաք բուտինք բերաւ՝ պնակի մը

մէջ պրուաճ։ Բակը՝ ոսքի վրայ, մէկ մէկ հատ ուսելէ վերջ՝

— Ձե՞ս նստիր, Զարէհ, ըսի, անշուշտ պատմելու բան մ'ուներս որ հոս եկար։

— Ձէ՛, պատասխանեց, եկայ որ քեզ առնեմ ու միասին Մաերիկ Մարտիկեանենց երթանք. Վնունդին օրը Մաերիկին ծնունդ էր։ Թէև երէկ գիշեր Ակումբը տեսայ դինք ու չնորհաւորեցի, բայց Տիկինին հետ քա պըբաբէնէզ պարած միջոցիս՝ խօսատացայ պաշտօնական այցս այսօր ընել։ Դուն ալ չե՞ս գար։

— Երթա՛նք, ըսի ու երկուքս միասին գացինք։

Բայց փողոցի դուռէն հազիւ ներս էինք մտեր որ Տիկին Մարտիկեանի ձայնը բարձրացաւ ակակղի սրահէն։

— Օ՛, աղէկ վրայ հասաւ Տօքթէօր Զարէհն։

Սրահէն դուռը իսկոյն բացուեցաւ։ Ներս մտանք։ Տիկին Մաերիկ ոսքի վրայ էր, դուռին մօտ. իսկ Պարոն Մարտիկեան՝ բազմոցին վրայ ընկողմանած տեղէն՝ վեր ցատկեց ու դէպ ի մեզ յառաջացաւ։ Զարէհ մեծ խոնարհութիւն մ'ըրաւ՝ իրեն յատուկ զուարթութիւնով, քիթի թեթև չարժումով մը ակնոցը վար ձգեց և ապա Տիկինին ձեռքը թօթուելով՝

— Ամենամեծ ապատիւ Մաերիկին հետ, ըսաւ ժպտադին, ծիլք, ծաղկիք ու ծերանաք. . . , այս մաղթանքս ձեր երկուքին համար է անշուշտ։

Ես ևս ձեռք թօթուեցի և նոտայ, սակայն նչմարեցի թէ Տիկինը ու մանաւանդ Պարոնը՝ իրենց սովորական զուարթ տրամադրութեան մէջ չէին։

— Է՛, սկսաւ բարեկամս, ամէն տարի բարով հասնիք, այն ըսինք։ Չիմայ տեսնենք թէ ինչու՛ Տօքթէօր Զարէհն աղէկ վրայ հասաւ, հիւա՞նդ ունիք, ո՞ւր է Օրիորդ Մարտիկեան ձեր քոյրը։ Եւ կարծեմ երէկ գիշեր ակումբ չէր եկած։

— Փիչ մը անհանգիստ էր, պատասխանեց Տիկին Մաերիկ, ինֆլուէնցա ունի, օրուան հիւանդութիւնը, սակայն ոչինչ բան մը, չա՛տ թեթև։

— Ուրեմն. . .

— Բայց հիւանդտեսի համար չէ որ այն խօսքն ըսի, չարունակեց նէ, գլուխս չատ մեծ փորձանք մ'եկաւ, մի՛ հարցնէք։

— Լաւ, չեմ հարցներ, կատակեց բարեկամս։

— Ո՛չ, ոչ, հիմակ պիտի իմանաք, ապամանդէ մեծ մանեակս կորսնցուցի. . . ։

— Ա՞յն զոր երկու գիշեր կը կրէիք, Տիկին, պուռացինք Զարէհ և ես։

—Այո՛։

—Իրա՞ւ կ'ըսէք, խնդրեմ, Տիկին Մարտիկեան, պատմէք, ըսաւ իսկոյն Նորենց, ակնոցը քիթը դնելով։

Այս միջոցին Պարոն Մսերիկ՝ ձեռքերը տարտամին դրպանները դրած՝ սենեակին մէջ վեր վար կը քալէր։

—Պատմէ, ըսաւ ան իր ամուսինին, ես ա՛յնքան մտածելիս ու դեռ ևս խորհելու վրայ եմ այդ կորուստին համար որ միտքըս կարծես ճաթելու աստիճանին հասած է։ Չի սիրեր կրնամ պատմել զայն պարագաներով։

—Լա՛ւ, ե՛ս կը պատմեմ, յարեց Տիկին Մսերիկ։

Ոաք ելաւ բաղխածուէն, նորէն նստաւ ու ձեռքերուն ջըղուտ չարժումներ տալով՝ ա՛յսպէս սկսաւ պատմել ընդհատուած հևքով մը։

— Երէկ գիշեր . . . Արևելեան Ակումբին երեկոյթը գացած էինք . . . ես ու Մսերիկ . . . , արդէն տեսաք . . . Աղամանդէ մեծ մանեակս դրած էի . . . , ժո՛ղք, ինչո՞ւ կորսուէր . . . , ինչ և է, միտ դրէք։ Տուն կը դառնանք մեր սենեակը կը քաշուինք և . . . ։

Յանկարծ նէ ոտքի կ'ելնէ, ամուսնին կը դառնայ և աջ ձեռքը ձախին մէջ զարնելով կը շարունակէ։

—Բայց մի՛ խենթեցներ դիս, Մսերիկ, ի՞նչպէս արևը կը տեսնեմ՝ ա՛յնպէս ալ կը յիշեմ որ ես, իմ այս երկու ձեռքերով, վիզս կամացուկ մը հանեցի զայն ու մեր լոգակահին վրայ դրի, անկողինին մօտ, օճառի տանին ճիշդ քովիկը։

Նստաւ կրկին ու շարայարեց. — այսպէս ուրեմն, Տօքթէօր, իմ այս երկու ձեռքերով՝ լոգակահին վրայ դրի մանեակս . . . , և այս առաւօտ երբ արթնցայ՝ չկա՛ր այլ ևս հոն . . . ։ Ո՞ւր կրնայ երթալ։

—Պարոն Մսերիկին դրպանը, դոչեց Նորենց քահքահով մը։

—Այդ ես առաւօտէն ի վեր կը պոռամ, բայց խօսքիս ականջ դնող չկայ, դրպանս է՛, դրպանս, պոռաց Մսերիկ։

Եւ ապա անուշ շեշտով մը շարունակեց.

—Անուշիկ կինս, քիչ մ'ալ ինձ միտ սիրտ դնե՞ս։ Երէկ գիշեր երբ դարձանք՝ ժամը չորսն անցած էր, ըսել կ'ուզեմ թէ՝ տասնէն չորս՝ վեց ժամ անդադար յոդնութեան մէջ էիր, խօսելու, խնդալու, պարելու։ Տուն դարձած ժամանակնիս՝ քունը աչքերէդ կը վազէր, կը յիշե՞ս, կառքին մէջ իսկ փոքրիկ քուն մը քաշեցիր։

— Կը հասկնամ բ'ինչ ըսել պիտի ուզես, ձայնեց Տիկին Մարտիկեան։

— Այն ըսել պիտի ուզեմ թէ, վրայ բերաւ ամուսինը, քանդ գլուխդ՝ կոթնած ես թէ մանեակը վրադ է և թէ գայն թագանին վրայ կը դնես, մինչդեռ առանց զգալու ձգած ես գայն կա՛մ ճամբան, կա՛մ Ակումբը, կա՛մ կառքին մէջ, ինչ որ չատ աւելի հաւանական և կարելի է։

— Վը՛յ, վը՛յ, հիմակ պիտի խենթենամ։ Կը կարծես թէ խելքս գլուխս չէ՞ . . . , իմ այս երկու ձեռքերովս հոն դրի։

— Ուրեմն, ո՞վ առաւ։

— Ես գիտե՞մ։

Բարեկամն ակնոցն վար առաւ ու մատերուն մէջ դարձնելով՝

— Պարոն Մարտիկեան, հարցուց, կ'ընդունի՞ս թէ Տիկինին մանեակը ձեր սենեկին մէջ հանուած ըլլայ, թէ՝ կը պնդես որ առնէն դուրս կորսուած է։

— Տօթէօր, պատասխանեց, անկարելի է որ մեր սենեակին մէջէն անհետացած ըլլայ, առնին մէջ չորս հոգի ենք, ես, կինս, քոյրս ու սպասուհին։ Քոյրիս ննջասենեակը մեր դիմացինն է որ մերինին հետ որ և է հաղորդակցութիւն չունի, սպասուհին վարը կը քնանայ, ի'սկ ես ու կինս՝ մէկ սենեակի մէջ որու միակ դուռնին կղպանքը մեր թոզաքին պէս ֆոյ գըտանք առաւօտ՝ կորուստը նշմարելէ վերջ։

— Բայց ես ինձնէն մէջ հանեցի մանեակս, պոռաց Տիկին Մարտիկ, ինչո՞ւ համար խօսքիս չէք հաւատար, կի՞ն ըլլալուս։

— Գանի որ այդպէս կը պնդէք, Տիկին, ըսաւ Նորենց փոքր ինչ բարկացած չեշտով մը, կա՛մ պոռթ առած էք գայն ու կը պահէք ձեր ամուսինէն, կա՛մ ան առած է ու կը պահէ ձեզմէ։

— Է՛հ ապա, ի՞նչ կ'ուզէք որ խօսիմ, թողէք որ մտածումս հարցնեմ։

Եւ դառնալով Պարոն Մարտիկեանին՝

— Գանի որ կը կարծէք թէ գո՛ւրսը կորսուած է, ո՞ր կը կասկածէք ուրեմն, հարցուց։

— Կա՛մ ակումբը կա՛մ կառքին մէջ։

— Որ եւ է քայլ մ'սկսա՞ք առնել վնտռելո՞ւ, ըսաւ Զարէհ, հետզհետէ սկսելով ուշադրութիւնն աչքերուն մէջ կեդրոնել։

— Առաւօտ խոհդն Ակումբ նետուեցայ, վեր վար հարց ու ֆոռմ ըրի, ոչ իսկ ամենաղոյղն հետք։ Դալով կառքին՝ կառա-

տունէ վարձած չէի, այլ Ակումբին անցքին փողոցն սպասող պատահական կառք մը։ Բայց քիչ առաջ Ոստիկանապետին մանրամասն տեղեկութիւնն հաղորդեցի՝ կառքին ձեւին ու կառապանին տեսքին վրայ։

—Եւ հիմակ ի՞նչ մտադիր էք ընել։

—Ձեր խորհուրդին դիմի սպասեմ։

—Ուրեմն՝ խնդրեմ եկէք, ըսաւ յանկարծ Նորենց ոտք ելլելով, երկու բառ ըսեմ ձեր ականջին, որովհետեւ կը կասկածիմ . . . ։

Եւ թողուց որ սրահէն դուրս ելլէ Պարոն Մարտիկեան և ինք հետեւեցաւ անոր։

Դուրսը՝ վայրկեանի մը չափ խօսակցելէ վերջ՝ գլխարկն առաւ ու երթալու պատրաստուելով՝

—Թորգոմ, ես կ'երթամ, ըսաւ։

Ես ևս ոտք ելայ ու մաղթելով որ կորուստը գտնուի՝ մեկնեցայ իրեն հետ։

Փողոցը՝ երբ մինակ մնացինք իրարու հետ՝ հարցուցի բարեկամիս թէ որի՞ վրայ կասկած ունէր, Տիկինի՞ն վրայ արդեօք որ կասկածն խօսք բացաւ Պարոն Մարտիկեանին։

—Չէ՛, պատասխանեց մեծ քահքահով մը, ըրածս պարզ խաղ մ'էր։ Ընդունելով որ սենեակը մեկ դուռէն շատ ուրիշ ելք ու մուտք չունի և ենթադրելով որ մանեակը սենեկին մէջ հանուած ըլլայ՝ ըստ Պարոն և Տիկին Մարտիկեանին պատմածին, կը մնար հաւանական կասկած մը հաւասարապէս երկուքին վրայ։ Եւ յանկարծ «կը կասկածիմ» խօսքը մէջտեղ նետելով՝ անոնց դէմքերը դիտեցի ուշով։ Տիկինը՝ լոյս մը գտնելու յոյսով՝ հետաքրքրուեցաւ և աչքերը խոշոր բացաւ. վատահ եմ, նէ անմեղ է։ Իսկ Պարոնը թեթև սաստանում մ'ունեցաւ. կը կասկածիմ։

Եւ այս ըսելով՝ Ս. Ստեփաննոս եկեղեցիին առաջ բաժնուեցաւ ինձմէ, հիւանդ տեսի մը երթալու համար։

(Մնացեալը յաջորդ թուով)

ԴՊՐԻԴՈՐ և. ՅԱՒՀՒՏԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆ ԵՒ ԻՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ *

Չէ թէ միայն անհատից, այլ նաև ամեն դարու և ամեն տեղւոյ, նոյն իսկ ամեն ազգի մէջ այն յատկութեան լաւ կամ յոռի կիրառութիւնն ապագայ ընդհանուր սերունդին վրայ համեմատաբար ազդած է։

Զգենք նախապատմական ժամանակն որ առ այժմ գրեթէ ենթադրական կը համարուի, և նահապետական վիճակն որ միաչափ կերպաւորական է, հարևանցի հայեացք մը նետեմք միայն այն ազդաց վրայ, զորս պատմութիւնը փոքր ի շատէ կը նկարագրէ։

Նախ յարևելս, չինական օրէնսդիրն իւր բազմադիմի ողջմտութեամբ և աչալրջութեամբ հանդերձ, քանի որ մանկտին հարց անսահման ազատութեան ներքև կոյր զկուրոյն հնազանդութեան կ'ենթարկէ, բնական է որ ստրուկ ժողովուրդ մ'ունենայ որ անգութ և անողոք ժողովուրդ մը կազմեն։

Հին Պարսկաստանը՝ դժուարակիր և համբերատար զաւակներէ, քաջ և արի սերունդ մը յառաջ կը բերէ։

Եգիպտոսի մեհենական և իշխանական դրութիւնը՝ ժողովուրդը տգիտութեան և գերութեան կը մատնէ։

Ապա յարևմուտս Յոյնք և Հռովմայեցիք, որոնց հանճարներն զգօնութեամբ իմաստասիրել աւելի՝ դժբաղդաբար վեր ի վերոյ ծանօթութեամբ սովորութեանց հետևելու հակամէտ ենք, թէև առանձին պերճախօսներ ունեցան, բայց անոնք աւելի մանկածուներ էին քան թէ մանկավարժ։

Այդ ժողովրդոց մէջ ալ յաճախ ֆիլիգականի յարմարեալ կրթութիւնը՝ դիւցազն, բռնամարտ, պէմարտ ըմբշամարտ, մենամարտ, ձիընթաց, վազարշաւ, նետընկէց և տէգընկէցներ յառաջ բերաւ. սոցա մէջ մանկական կատարեալ դաստիարակութիւնը նկատի առնուած չըլլալով Սոկրատայ և իւր աղնուատիպ աշակերտաց նրբաքնին վարդապետութիւններն իսկ այս նիւթամոլ խաւտութիւնը չկրցան մեղմել։

Ընդհակառակը միջին դարու սոսկ հայեցողական դաստիարակաց և թաքուն գիտութեանց դրութիւնը՝ մենակեաց, միստիկ, կախարդ և կանխագուշակներ, իղձեր և ղիւթեր նամանաւանդ անգիտաց խաւտն բազմութիւն մ'արտադրեց։

* Տե՛ս, թիւ 3 երես 118։

Առաջինք՝ ինքնահաւան անգթութեան մը, և յետինք առանձնամոլ անզգայութիւն մը յառաջ բերին. այս նպատակաւ է որ անմահն Պասկալ չհշտեց թէ «Մարդ ոչ անասուն է և ոչ հրեշտակ, ով որ զայն հրեշտակացնել կ'ուզէ՝ կ'անասնացնէ»:

Ըստ որում վերջի դարերը՝ խոր քննութեամբ մանկան և ընդ նմին ամբողջ սերնդեան հիմնաւոր և անապական ուղղութիւն մը տալ ուզեցին;

Այդ ուղղութեան միակ միջոցն էր ընդհանուր դաստիարակութիւնն և մասնաւորապէս մանկականը բարւոքել:

Նախ Լէյբնից խոստացաւ սահմանեալ ժամանակի մը մէջ մարդկային սեռի վիճակը կերպարանափոխել այդ միջոցաւ, այսինքն, այն դաստիարակութեամբ որոյ նպատակն էր մշակել և ծաղկեցնել մարդուս բոլոր համարուն կարողութիւններն որք նիւթական, մտաւորական և բարոյական անուամբ գլխաւոր երեք մասի կը բաժնուին;

Այս բաժանման մէջ թէև ոմանք բարոյական կարողութեան կամ զգացման գոյութիւնն ուրանալ ուզեցին, առարկելով թէ այդ կարծեցեալ կարողութեան ազդեցութիւնը միօրինակ չէ հետևաբար բնական և տիեզերական չըկրնար ըլլալ, բայց խեղճերը չատ սխալեցան, որովհետև փոփոխութիւններն ոչ թէ իսկական այլ լոկ երևութական էին, որք միշտ արտաքին պատճառներէ յառաջ կուգային;

Մինչ այդ ուրացողք կրնան հերքել թէ ժառանգականութիւնը, խառնուածքը, ժամանակը, միջոցավայրը, կրթութիւնը, դաստիարակութիւնն և բամբիւռ և բազմօրինակ հանգամանգներ՝ բարոյականէ աւելի նիւթական և մտաւորական կարողութեանց վրայ ալ անսահման ազդեցութիւններ ունին;

Այդ ուրացողաց ենթադրութեան նայելով և յարակայ փոփոխութիւնները նկատի առնելով միթէ կրնամք ըսել թէ նիւթական և մտաւորական կարողութիւններն ևս գոյութիւն չ'ունին.— քաւ և մի՛ լիցի:

Ըստ որում հակառակ այդ նիւթապաշտական անհեդեդ ցնորանաց, մենք կատարեալ համոզում մը կրնանք գոյացնել որ մանուկն ի բնէ բարոյական վերապոյն ներշնչումներ ունի. նա գեղեցկին կը ցարի, ճշմարիտը կը սիրէ և բարին կ'ուզէ:

Ոչ թէ միայն մանկտին այլ և բարձրագոյն անասուններն իսկ գեղեցկութեան ցարում մ'ունին; Այն երկիրներու մէջ, ուր թռչունք աւելի զանազան և միայլուն փետուրներ ունին

հոն անոնցմէ չատերը՝ աւելի կենդանի գոյներ կ'ընտրեն իրենց բոյնը զարդարելու և ծածկելու համար։

Միլէի բացատրութեան համեմատ, այդ օդային արարածները՝ մեր երկրին մէջ աթէնք հազուստով աղքատ, բայց սրտով հարուստ են։»

Երբ առնակը՝ արշալոյսը ու վերջալոյսը ողջունելու համար մեծաւ հրճուանօք օրհնութեան երգեր կը գեղգեղէ, երբ իր զուգականը՝ գեղեցկաձայններէ կ'ընտրէ, կարելի՞ է ըսել որ նա անզգայ է երգին գեղեցկութեան։

Այսու ամենայնիւ այդ բնազդային ճաշակին մէջ վնտռելու չէ վերին միտում մը, որ մարդոց մէջ միայն կը տեսնուի։ Անասնոց մէջ գեղեցկին ընազդումը միջոց մ'է զանոնք իրենց վախճանին հասցնելու համար, բայց մարդկային տեսակէտով վախճան մ'է ըստ ինքեան, անշահասէր ըղձանք մը զէպ ի գաղափարականն, այն է, իտէալ։

Գեղեցկութիւնն որ էապէս կարգ և ներդաշնակութենէ կը բաղկանայ, արուեստից միջոցաւ նախ երևակայութեան և հոգւոյն կը տիրէ. այդ կարգն ու ներդաշնակութիւնը յետոյ սրտին կ'ազդէ և անմիջապէս երևան կուգայ վայելչութիւն և շնորհ, հետևեալ կը տեսնուին չարժման մէջ համեմատութիւն և դործոց մէջ ճշտութիւն։

Սոյն կերպիւ բարի ճաշակն անձնական մեծարանք յառաջ կը բերէ, մասնաւոր և ընդհանուր բարքերը կ'ամոքէ, կ'ուղղէ։

Կան բարոյական անթիւ ուղեղութիւններ ու թերութիւններ զորս գեղեցկութեան սովորած միտք մը ոչ կրնայ յղանալ և ոչ խորհելու չի՛ջանիլ. այս նպատակաւ էր որ Յունականները՝ գեղեցկութեան և առաքինութեան համար զատ նոյնութիւն մը կը դաւանէին։

Ուրեմն մանկավարժական և ընդհանուր դաստիարակութեանտեսակէտով ստիպուած ենք մշակել զմանկտին ի ակզբանն գեղարուեստից, որոց չատ հակամէտ են։

Մանուկը ճշմարիտը կը սիրէ, ըսինք. թողունք որ այս մաքին բարոյախօս մանկավարժ Հանրի Մարիսոնը, ուզղակի ինք խօսի։

«Ճշմարտութեան սէրը՝ իւրաքանչիւր անձի վրայ, և ամենէն յառաջ, բնական դիւրահաւանութեամբ յերևան կուգայ. ճշմարտութեան համար այնպիսի յարմարութիւն ունինք, որ ի ակզբան առաքենէ և սխալութենէ կասկածելու քնաւ չժա-

թութիւն ցոյց չենք տար. մենք կը հաւատանք ինչ որ մեզի կըսեն. մանուկն անդստին ի բնէ դիւրահաւան է, մինչև որ զայն խաբած չըլլան. ասկայ բնական բերմունք մի է որմէ սկսք եզածին չափ օգուտ մը չեն քաղեր (դժբազդաբար). կասկածը միմիայն ստութենէ կը ծնի։

Դիւրահաւանութիւնը կրաւորական է, ճշմարտութեան սէրը ներգործական կերպարանք մը կ'առնու, երբ քննական և զննական ոգին զարթնու. և պարագային համեմատ առաւել կամ նուազ ուժգնութեամբ ի հանդէս կուգայ, և կ'առաջնորդէ գիտական մեծ արուեստեան, այդ ամրողջական անձնամոռացութեան, որոյ բիւրաւոր օրինակները կը տեսնենք գիտութեանց և մեծ գիւտից պատմութեան մէջ։

Ճշմարտախօսութիւնը կամ հաւատարմաբանութեան պէտքը, զմեզ մինչև անգամ անձնուիրութեան կրնայ տանիլ երբ վըստահ լինինք թէ ճշմարտութեան մը վերահասու եմք կամ սիրացած՝ կ'ուզենք զայն պատմել և յայտնել. ուրիշները աշակերտելու ջանքը կամ նախանձն որպիսի դէպքերու ալ տեղի տայ, կը կայանայ զայն հռչակելու, ի հեռաստան տարածելու և ի հարկին կեանքն ալ անոր տալու վրայ։

Այստ ոմանք կրնան առարկել թէ, ստութիւնը բնական չէ՞, այնչափ բնական որ կարող եմք ըսել թէ «Մանուկն ի բնէ սըտախօս է»։—սոյն առարկութեան կը պատասխանենք որ թէև ստութիւնը կանուխ կ'երևի բայց այդ երևումը արդէն մանկան անձնական փորձառութեան և ծնողաց անյաջողակութեան և չար օրինակաց արդիւնքն է։ Մանուկը ստելու մտադիր չէ, իւր առաջին ստախօսութեան վրայ բնաւ չը խորհտանար, կը չարագունի և մօրը հայեացքին չը կրնար հանդուրժել. երբեմն այնպիսի տաժանելի զգացումներ կը կրէ որ նոյն հետայն յաղթահարելով կը խօստովանի այն յանցանքն ու թերութիւնը, զոր ծածկել կ'ուզէր։

Թովմաս Բիտ՝ չատ ընտիր կերպով ըսած է որ «ճշմարտութիւնը կը խօսին ինչպէս ախորժակով կ'ուտեն, կը ստեն ինչպէս դեղ կ'առնուն» այսինքն, կը ստեն ուրիշ նպատակի մը համար. կամ աւելի մեծ բարիք մը ձեռք բերելու, և կամ կարծեցեալ աւելի մի մեծ չարիքէ խուսափելու դիտաւորութեամբ, ըստ որում ստախօսութիւնը միշտ մէ որ պատճառ կը լինի աչխատութեանց և ցաւոց. չափահասներն ալ ստելու ուրիշ նկատումներ ունին, զատ այն պատճառներէ զորս ի վերև թը-

ուարկեցինք, բայց այդ պատրուակաց բովանդակութիւնն վայրաքարշեալ անկանի ի խորս չահագիտութեան և ունայնութեան. մեծաքան պուրտախօս մը, որսորդ մը, ճամբորդ մը կը պատմէ արկածներ, ճախորդութիւններ և յաջողութիւններ որք միայն իւր երևակայութեան մէջ գոյութիւն ունեցած են. ասոր պատճառն է ունայնասիրութեան և ցուցամոլութեան պէտքն որ կը տիրեն ճշմարտասիրական բնազդման վրայ, այսու ամենայնիւ այդ պարագան բնաւ սոյն բնազդման գոյութեան դէմ ապացոյց մը չէ, միայն մեզ համար մի ազդարարութիւն է որ մանուկը զսպենք այդ վտանգաւոր ճանապարհէն։

Գալով բարոյն մանուկը մինչ ցոյց կ'ուտայ որ ինք անյարմար չէ պարտուց և իրաւանց ծանօթութեան և գործադրութեան։ Մանկան վրայ կը նշմարեմք հաստատ նշաններ, որք կ'ապացուցանեն թէ ինք պատրաստ է կատարել հրամայեալն և խորհիլ յարգիլելոյն. նեղիլ չուզեր, ասոր հետ մէկտեղ նեղելու տենչ մ'ալ չը ցուցներ։

Ոմանք կ'ըսեն թէ կան ազգեր, որ Բարբարիներն, Սաւաժներն և պարզիւ բառերը չունին, ըստ որում այդ զգացումներէ ևս զուրկ են, և ահա այս ապացոյց մ'է բարութեան զգացման նախնական և տիեզերական չըլլալուն։

Ասոնք կը սխալին, որովհետև բառերու գոյութիւնն ու չըգոյութիւնը կարևորութենէ զուրկ են, արդէն այդ գաղափարները վերացական են. Եգիպտացիք ալ պարզիւ բառը չունէին, բայց քաջ պարտաճանաչներ էին։

Վերջապէս քանի որ հաճելին և օգտակարն ընդունելի են յամենեցուն, հարկ անհրաժեշտ է որ անոնք պատշաճութեան կանոնի մը կարօտ ըլլան. ուրեմն այն որ բարի չէ, ինչպէս պատշաճ կրնայ համարուիլ։

Արդարև մանուկը միշտ ընդունակ է ըմբռնելու պատշաճութեան գաղափարն որ ըստ ինքեան հաճելին և օգտակարը կը պարունակէ, բայց երբ սխալ եղած գործուածներն ի գործ չը դրուին, կրնայ մանուկը լուկ հաճելւոյն, այս փոփոխակի և հակադարձ վիճակի համար է որ կըսեն թէ մանուկը մատաղատունկի կը նմանի, զոր որ կողմ որ ծռես հոն կը հակի. անհրև է որ մանկանց կրթավարը և պարտիզպն նմանութեան գաղափարն աստի ծագումն առած է։

Բառին արդի բուն նշանակութեամբ մանկավարժային չա-

ղաց հիմնադիր ուղղիչք և յարդարիչք Պետրոսլամի և Ֆրօբել չատ յարմար գործած են իրենց մտաց գովելի ծնունդը Պարտէզ անուամբ մկրտելով։ Արդարև պարտէզ բառն որ ատ փոխաբերաբար առնուած է, կարի հեշտընկալ և չհաւէտ ու բարի օրինակ նմանութիւններ կը կրէ։

Պարտիզպանութիւնն որ մշակականիցն ազնուագոյն մի մասը կը կազմէ, արժան է մանկավարժական վեմ պաշտօնին նմանցնել։

Ժամանակ մը և թերևս այժմ իսկ մեր մէջ ալ մանկանց կրթավայրը ծալլոց յորջորջուած է։

Մտղոցի գաղափարը թէև հաճելի է և զուարճալի, բայց ոչ այնչափ օգտակար։

Պարտէզն աւելի ընդարձակ նշանակութիւն մ'ունի քան ըզբուրաստան, երբ աւելի լայնարար առնուի, պարտէզը դրախտի նշանակութիւն ալ կրնայ ունենալ։

Արդէն Զանգիկ լեզուաւ Պէրլի դեչլը կամ պէրդեչը և Պարակերէն ֆէրթէլ բառերն ալ ասոր լեզուաբանական մէյմէկ ապացոյցներ են։

Բայց պարտէզ մը կատարեալ դրախտի կերպարանք առնելու համար պէտք է որ առաքինութեան չորս գետակները միշտ զմխին անտի։ Այն է։

Արութիւն ի կամականի,
Ողջախոհութիւն ի զգացականի,
Իմաստանութիւն յիմացականի,
Արդարութիւն յամենայնի։

Այսու կը տեսնեմք գլուխն երջանկութեան.
Այս է նպատակ դաստիարակութեան։

Ահա այս միջոցներով կը վերնան ինքնահաւանութեան, նախանձու և ատելութեան գծուծ գաղափարները, չարակամ կրից յամառ և վատթար զգացումներն, տկարութեան նչան եղող գաղտնի մտրոտախաստութիւններն և անիրաւութեան արդիւնք եղող պատակտական գործերը։

Յայնժամ կը տիրեն վեհանձն արութիւն, քաղցր բարեխառնութիւն, վեմ համեմութիւն և բամբակ արդարութիւն։

Այս կերպով ո և է Ժան Ժագ Րուսօ մը դիտութեանց վերակենդանութիւնը չը կրնար նշանակել առաջի աչխարհի իրը վնասակար։

Այս ամենէն կրնանք մակարերել թէ մանկական դաստիա-

կութիւնը որչափ կարևորութիւն ունի մեր ներկային և մասնաւորապէս ապագային նկատմամբ։

Ուրեմն պէտք է որ այս մատակատուներու համար արգասաւոր և պարարտ հողեր վնտռենք, մաքուր ջրով և այլովք հիւթ մատակարարենք, զանոնք վնասակար ճճիներէ ղերծ պահենք և ահա այն ատեն մեր ամենանուիրական պարտաւորութիւններէն մին կատարած կըլլամք։

Իսկ եթէ մենք անձամբ և ուղղակի այն պարտաւորութիւնը չըկրնանք կատարել, գոնէ ջանանք աչխատողաց աչակցելու նիւթապէս կամ բարոյապէս։

Ահա այս նպատակաւ կուզամ բարեսէր Թաղեցւոցս կողմանէ հրապարակային և յատուկ շնորհակալիքս յայտնելու մեզուտյան Օրիորդ Նուարդ Աբրմաքչեանի որ ինքնօգնութեան ոգիով սկզբանց հետևելով բարի օրինակ կը հանդիսանայ գեղեցիկ սեռին, այն սեռին որոյ ձեռքն է ներկայ և ապագայ մարդկութիւնը։

Ըստ որում կը շնորհաւորեմ այդ համեստ և պարկեշտ աչխատասէրը և կը մաղթեմ յերկոից որ միշտ փառաց և պրդեանց սրտակներով զարդարէ իւր բարի բաղձանքն ու յարատև ջանքը։

ՆԱԶԱՐԷԹ ՆԵՐՍԻՍԵԱՆ
Փոստոքան և խմբագէտ ,,Ինչէր'' լրագրոյ

ԱԼՓՕՖՍ ՏՕՏՔ*

Հարաւի նկարագրոյն մէջ կրնար յաջողիլ միայն մի հարաւային, որ իւր քննած անձանց յատկութիւններէն մի քանին յինքն զգար, որ հարաւն ունենար իւր արեան մէջ։ Եւ Տօտէ ցեղին այդ յատկանիշն ունի։ Լատին մ'է։ Իւր ծագման աւանդութեանց հետևելով, ձևին սէրն ունի գերազանցապէս։ Ի ըկզբան, կարծես բնագրմամբ, վիպքը, կոկիկ նորավէպեր գրեց, որք համառօտ այլ խնամեալ ամբողջ մ'են և հներուն թողած ընտրելագոյն նկարներուն կը նմանին։ Իւր վէպերուն մէջ, յե-

---

* Տես թիւ 3 երես 104։

ատոյ, ալիտի աչխատի մեծցնել, ընդլայնել. բայց երկար առեն չպիտի յաջոզի, և լաւ դիտնալով թէև որ իրաւու քով դրուած վիպասիներ վէպ մը չեն կազմեր, պիտի սակայն չկրնայ իւր նախկին կարգ պատմութեանց սիրոյն յաղթել։ Անջատ պատահարները իրր ամրոզութիւն մը նկատելով, կ'աչխատի վրան, կը գեղեցկացնէ, ի՛քին տրժէք մը կուտայ, այնպէս որ կարելի է զայն վէպէն հեռացնել առանց ոչինչ ատրելու։ Կը սիրէ նոյնպէս վարպետութեամբ չինուած տեսարաններն, ընդլայնումներ բաւի մը վրայ որ միշտ կը կրկնուի նապարթի նման, մանրամասնութիւններ առանձին, գործէն անկախ։ Նամիա առաջնուածներու, գալատիարը նկարող ձեռով մը յայտնելու ճաչակն ունի։ Այսպէս Աֆֆի սկիզբն արդէն — ժան կոսէն որ սիրուհին թևերուն մէջ վեր կը տանի, և ելքն որ ամեն յարկ աւելի կը գժուարանայ ու չունչը կ'սպառի։ Ամբողջ ապագայ վէպին հոգին այդ տեսարանին մէջ է։ Ձևին սէրը կը մղէ գինք մինչև ոճի թեթև նրբութիւններ ու զարդեր ընդունել։ Իւր գրքերուն մէջ, բանալիներ կան որք տրինկ տրինկ կ'ընեն, կանաչ հագուստները (1) որք կը խօսին, պատմութիւններ գիտցող կառքեր։ Ոմի այս ձևը չպիտի կրնայ թօթափել։ Իւր ամենէ ծանր ու զորաւոր երեսներու մէջ իսկ, այս բարակ ու տկար չէչտերը կան և տպաւորութիւնը կը նուաղեցնեն։

Իւր հեգնութեան կերպովը ալ Տօտէ հարաւային մ'է։ «Միսդրալի լեզուին մէջ, կըսէ, բառ մը կայ որ ցեղին բնապողները լաւ կը բացատրէ· galéja, ծաղրել, կատակել։ Դա ցոյց կուտայ հեգնութեան փայլը, չարաճճի կայծը՝ որ կը վառի Ըրօվանսի աչքերուն մէջ . . . ։ Եւ նա ալ gaïéjaïré մ'եմ, փափիկ մառախուղերուն, ցեխերուն և ախորժութեանց մէջ, կորսնցնել թերևս խնդալու ճաչակն։ Դպրոցները կարպալուն մարդ կը տեսնէ որ ուրախութեան խորք մը կար չիս, հարաւի պղեգիկ լոյսին բացուած (2)»։ Միայն Դպրոցների մէջ չէ որ իւր հեգնոտ միտքը կը տեսնենք։ Նորա դիտողութիւնը միշտ հեգնութենէ չինուած։ Մաղրելով կը ներկայացնէ մեզ իւր անձերը, Զանձնաւորիր նոցա հետ, դուրսը, այլ մտը, քովը կը կենայ, ու նոցա թերութիւն, manieները, ու նաև յոյս ու յուսախաբու-

(1) Ալպերնահանի։

(2) Trente ans de Paris, *երես* 149։

թիւնները, անկարող ջանքերը դիտելով կը զուարճանայ։ Ցիշեցէք տ'Արժանդօնը (Ռը ով), և ինչպէս, նորա վրայ խօսած առեն, միշտ զգալի է որ կը ծաղրէ զայն։ Ֆրանց Բիսլէր, որ ենդիպատոսէ կը վազէ կուգայ հարսին խօսք հասկցնելու, և իւր սէրը կը յայտնէ ներա, կ'անուանուի շարունակարար le pisticier . . . Ցիշեցէք Սէն – Ռօմանի հանդէսներու պարագան, բոլոր գիւղը դրօշակազարդ, մեծ հիւրը ընդունելու համար, երաժիշտները կանգնած՝ նշանին սպասելով, և պաշտօնատարք կայարանը խմբուած, դռէնին անցքին վրայ — որ կ'անցնի արդարև, բայց կանգ չառներ։ Սոքա և նման տեսարանները յիշեցէք, ամենքն ալ galéjades. բայց ինչո՞ւ չէ. և միթէ կեանքն ալ յաւիտենական galéjade մը չէ՞։ Դիտեցէք սակայն որ հարաւային հեգնութիւնը գերմանականին ծանրութիւնը և անկլիականին անգթութիւնը չունի։ ժպտուն է ու թեթև։

Տօտէի յատկանիշերն են եղած արդէն այդ թեթևութիւն ու չնորհը։ Դրեթէ կոպիտ իրապաշտութեան մը ժամանակ, Տօտէ բարեվիտ ծիծաղը պահած է։ Կենաց ազեղութիւնները կը տեսնէ, բայց կանգ կ'առնու անպատուոյն, ստորինին սահմանը։ Զուարթ է իւր երևակայութիւնը տխրութեանց մէջ իսկ։ — Հարաւային Ֆրանսա ճամբորդողք տեսած են չոր, անտերև ծառերը, որոցմով յատկապէս լի են դաշտերը։ Արևը դալուն, լերկ տխուր գետինը ուրախ ու հանոյալի կը դառնան։ Այսպէս ալ է եղած Տօտէի։ Երևակայութիւնը միանգամ ընդմիշտ ոսկի գունաւորուած է իւր հարաւին արևովը։

* * *

Զուարդութեան ներքև տխրութիւն կայ սակայն։ Բրօվանսի ուրախ բանաստեղծներուն հայրենակիցը Տիդնսի ազգական մ'է։ Ու արդարև Տիգընսի նմանցուցած ալ են գինք։ Անկլիացի վիպասանը գժբաղդ մանկութիւններ պատմել կը սիրէ, կ'արդահատի նոցա վրայ, վրիժառուն է մի քիչ դրկեալներուն։ Նոյնպէս Տօտէ։ «Տիգընսի սէրը կը զգամ սրտիս մէջ անկեալ և աղքատներու, մեծ քաղաքներու թշուառութեանց համար։ Իմ ալ, նորա նման, կենացս սկիզբը դառն եղաւ. տասն և վեց տարեկանէ առաջ տխրացած էի հացս ճարել։ Այդ է կարծեմ մեր ամէնէ մեծ նմանութիւնը (1)։» Տօտէ պատմած է Le pe-

(1) Trente ans de Paris.

tit chose ի մէջ պատանեկութեան խեղճութիւնները։ Ինքն է Տանիէլ Էյսէթը որու Լիօնի մէջ կրած նեղութիւններն չէ կարելի ընթեռնուլ առանց յուզուելու։ Տօտէ կը պատրաստուէր իր ապագայ արուեստին՝ իր անձնական արկածները պատմելով։ Այդ բարձրութեան վրայ, յիշել, ստեղծել է արդէն։

Տօտէի տաղանդին տիեզերական հրապոյրը մասամբ այդ տաղանդին այլազանութեան արդիւնք է։ Տօտէ բանաստեղծ, վիպասան և ռէալիսդ է։ Բանաստեղծն իրականին ղգացումն ունի, համբերող ու հաւատարիմ դիտողն հարուստ համարձակ երեւակայութիւն։ Ցուրտ ու անտարբեր կերպով չպատմէր, կը մասնակցի եղելութեանց, կը զթայ միոյն, կը ծաղրէ միւսը։ Մի միակ առաւելութիւն չէ ունեցածը, հապա չատ մը յատկութեանց խառնուրդը, յաջող միացումը։ Երկու տիրող տիպեր կան սակայն, զրեթէ իգական զգայնութիւն և դիտելու ու հեգնութեան տուրք։ Այսպէս, մինչ սիրելի է եղած ռէալիստներուն (1), չհաճած է նաև Պուլնըդիէռի նման դասականներու համակրանքը (2)։ Միշտ իրական, այն մտքով որ իւր նիւթերը չուրջէն է քաղած, հետեւելով կօնքուռի սկզբունքին, թէ մարդ իւր տեսածը միայն կրնայ լաւ, նկարագրել, Տօտէի բոլոր վէպերն ճշմարիտ հիմ մ'ունին, իւր տեսած կամ լսած դէպքէ ծնեալ են։ Իրական կեանքէն կ'առնէ հետաքրքիր, դեղեցիկ կամ տգեղ տիպ մը, և ողջ ողջ կը բերէ սեղան։ Նապաղը օր. հմր. ծանօթ անձնաւորութիւն մ'է երկրորդ կայսրութեան (Ֆրանսուա Պրավէյ)։ Նոյնպէս՝ ձեւը խեղճ երիտասարդ մ'էր (Ռաուլ Տ. . .) զոր Տօտէ ճանչցած է և Ալճէրի գործ մը գըտած, ուր մեռաւ (3)։ Նոյնպէս Էվանժէլիսթը, իւր ամենէ դասական դրուածքը։ Ամեն ինչ իրական է վէպին մէջ, Էլէնի իւր մօր ղրկած նամակներէն ստորակէտ մը փոխուած չէ, և վիպասանը հոս իւր բառերով, «պատմութիւն չունեցողներուն պատմագիրն է։» Բոլոր այդ վէպերը ճշմարիտ են։ Տօտէ իրօք

(1) Տեսնել Louis Desprez, L'évolution naturaliste, *ընծիր ուսումնասիրութիւն մը (երես 119–176)։*

(2) Տեսնել F. Brunetière, le roman naturaliste (*երես 80–110, 368–396*)։ — Պուլնըդիէռ սաստիկ հակառակորդ է Զօլայի։

(3) Trente ans de Paris, *երես 257–285։*

տեղի ունեցած բաներ կ'ըսէ միայն։ Լրագրներէն կամ աւելի յաճախ իր անձնական յիշողութիւնէն կը քաղէ նիւթերը։ Պատկերհաններու նման, որք ֆոտոգրաֆներու յատուկ տեսարաններ ունին, Տօտէ ևս տեսածն ու լսածը անմիջապէս կը նշանակէ, և կը հաւաքէ ապագայ դրքին նիւթերը։ Յետոյ, միացնել ու իրար կապել կը մնայ այլ ևս Ցիշելը ստեղծել է իրեն համար։

Այս մէթոտը այնքա՛ն դիւրին կը թուի, և այնքան քաջալերիչ է մկներու, որ շատեր նոթեր ժողվեցին ու նոյնութեամբ հրատարակեցին, բայց օգուտ չըրաւ։ Իրաւամբ կըսէ Տօտէ· ամենէ հետաքրքիր արկածը, ապուշի մը ձեռք ինկալուն, աւելի արժէք չունի քան մարդկային ստեղծուածը՝ տխմար վիպագրի մը դրչին տակ, ո կարևորը Տօտէի տեսարակները ունենալը չէ, հապա Տօտէի գիրքերը գրելը։ —

Այս մէթոտը ենթադրել կուտայ որ մարդ աչք ունի և տեսնալ գիտէ։ Ասոի այնքան սովորական բան չէ, կոնկուռները իւրեանց տաղանդը լաւ պարզած կը համարէին՝ ըսելով· « մենք դրագէտներ ենք որոնց համար տեսանելի աշխարհը կայ։ » Ջի Տը Մօփասան (Գը ովֆ), Հիւգը տեսած ենք ամենքնիս ալ, բայց Տօտէն կարդալով է որ նոցա յատկութիւնները կը նշմարենք առաջին անգամ։

« La science du romeancier n'est pas de tout écrire, mais de tout choisir (1)։ » Կէտնքը լայն է։ Զօլա կ'ըսնարէ Թէրէզ Ռաքէն և Նանա, աղտեղութեան ծաղիկները։ Տօտէ ունի Տր. Ռիվալ, Էլիզէ Մէռօ, Թօզընի դուքս, Իւէն, Ֆրէտերիք Թադուհին, մինչև իսկ Սաֆօ, իրական տիպեր մէջտ, բայց ուր դարձեալ բարւոյն մի կայծը, յաճախ բոցը, կը փայլի ու կը ջերմացնէ, և առանց որ վէպերն ad usum delphini և առաքինութեան մրցանակ ստանալու համար դրուած լինին։ Ոչ, չեն պակսիր տըխուր, փչեղ պատկերներ (քանի որ պիտելի է դարձեր այդ բառը մեզ), Նապոլէոն մէջ՝ որ յուսահատ կը մեռնի, Ֆրօսթ ծիլըն և Ռէվէյէ Էնէէ մէջ՝ ուր կնոջ մը մարքրիկ ձեռքը այնքան չարիք կը հասցնէ, Նէնա Քուէնթաէ մէջ՝ որու նշանարան ու հոգին է « Փողոցը ուրախութիւն, տունը կսկիծ։ » Նայց Տօտէի բոլոր վէպերն ալ տխուր են իսկապէս, բոլորն ալ, նոյն իսկ դուարթն Պարդարէն, իր երևակայութեան խաբեալն ու դերին, և որ

(1) կոնկուռ, Քոռնալ, Գ., երես 245։

դո՞ կրնայ ըլլալ մի օր, և ինչպէ՞ս չ'ինի տխուր, երբ կեանքը կ'ուսումնասիրէ, կեանքն՝ որ ի հարկէ տխուր է, մահուան դատապարտեալի մը չնորհուած աւելի կամ նուազ երկար պայմանաժամն ըլլալով միայն։

Տօտէ անդթութեամբ կը ծաղրէ դէչերն, անկարող չարլատաններն՝ որոնց համար բնորոշ բառ մ'ունի, râté ալաքը վերջին մէջ, կը դարձնէ հաճոյքով, ուսումի չփոխացներ, նոր վերք մը բանալու, նոր տկար կողմ մը գտնելու։ Ցիշեցէք Տըլօպէլը, անկեալ դերասանը, մինչ կինն ու աղջիկը տունը քաղցած են, սրճարան ու թատրոնները, նոր յուզմանց եւևէն կը վատնէ իր վերջին սանդիմները։ Նա râté է միշտ, հմարիտ միշտ մէջ իսկ։ Աղջկանը դադարին արտասուելով հետաքրքրուած ատեն քոմինին կ'ըսէ կամաց մը, «տեսար ի՞նչ բան. —երկու տան կառք կայ։»

Չապա Հիւգը (հրեայ), բժշկութեան râté ն, որ «գիւտեր կընէ միշտ, և հիւանդները կը թունաւորէ։» Մօրօնվալ, դպրոցի «Տէր և Տնօրէն» (ի՞նչ ծանօթ անուն ի մեզ, այնպէս չէ՞)։ որ օտար տղայոց վարիչեան կրթութիւն կուտայ...։

Râtéներու թագաւորն է սակայն անկասկած տ'Արժանդօն (Պը ով խնդրեմ), բանաստեղծ չարլատանը, կէօթէ թիւ 2, որ կանանց չրջաններու մէջ, քարոզչի հովերով իր յաւիտենական սէրոյ հաւատոյքը կ'արտասանէ։

Moi je croie à l'amour comme je crois en Dieu...

«Եւ դիտեցէք որ չա՛տ կը կասկածիմ այս խեղկատակը Աստուծոյ այնքան կը հաւատայ՝ որքան ուրիշ բաներու...(1)։

Տ' Արժանդօնը կը հալածէ հեղինակը հմարիտ ու կատաղութեամբ մը կարծես, իր երեք վէպերուն մէջն ալ կ'երևի նոյն դէմքը (ը Բէռէ Շօշ, ֆամ պ'արբէսք և ճէ+)։ Միշտ նոր մանրամասնութիւններ, նոր պարագաներ կ'աւելցնէ, անձին չրջանը ընդլով, ստուերներ ինտուելով, այնպէս որ բոլորովին ծանօթ դէմք մ'է մեզ համար այլ և այնպէս ճէ+ի խորդ-հայրը, հնդկական ոտանաւորներու բանաստեղծը, և որ պիտի գրէ – դևռ – ֆոռա-ռէ աղջիկը։

(Մնացեալը յաջորդ թուով)

---

(1) Les femmes d'artistes

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

« *Մանրհաբանութիւն* », Գրեց ՏՕՔ. Ն. ՏՂԱՒՈՒՐԵԱՆ, Կ. Պոլիս, Տպ. Ն. Կ. Պէրպէրեան, 1898, երես 114, գին 10 դր.-ս

Մեր հայերուս մէջ Գիտական – Մանաքիպական գիրք մը հեղինակել և հրատարակ հանելը անհատական ոյժէ վեր գործ մըն է. վասն զի շատ քիչ ընթերցողներ կան որ հետաքրքրուին և զբաղին այդ կարգի մասնագիտական գործերով. ընթերցող հասարակութեան ստուար մեծամասնութեան միտքը դեռ այնքան յառաջացած չէ որ համ ու հաճոյք զգայ, իսկական օգուտ քաղէ այդ կարգի գրուածներէ։ Հետևաբար գիտական – մասնագիտական գործ մը հրատարակող հեղինակը բնաւ իր յոյսը չը դներ կլսակիրթ և զարգացման ստորին աստիճանին վրայ գտնուղ հասարակութեան մը ստուար մեծամասնութեան վրայ. նա շատ լաւ գիտէ թէ իր աշխատասիրութիւնը փոքր խումբի մը կողմէ միայն պիտի կարդացուի, և տպագրական ծախսի կէսը հազիւ պիտի գոյանայ։

Ահա, այս պատճառներով է որ մեր մէջ գիտական – մասնագիտական գործեր շատ քիչ անգամ հրատարակ կ'ելլեն, հեղինակները իրաւունք ունին ամբութեան դատապարտելու, և եթէ ձեռնարկեն իսկ այդպիսի հրատարակութեան մը, իրենց ոյժերէ շատ բարձր գործ մը տեսած կը լինին, նիւթական տեսակէտով, իրենց կողմէ մեծ զոհողութիւններ են անոնք, յանուն գիտութեան, յանուն զաղափարի և յանուն մարդկութեան . . . ։

Մեր հասարակութեան փոքրաթիւ զարգացած մասը միշտ կը գանգատի թէ գրական հրատարակը անհամ և անլի վէպերով լճողուած է, թէ գիտական – մասնագիտական լուրջ գործեր լոյս չեն տեսներ, եւ։ Հասարակութեան այս դասակարգն ալ իր իրաւունքը ունի, չէ կարող հրատարակի վրայ դնուած մեղ ծանօթ երկերով իր մտաւորական քաղցը յագեցնել, հոգեկան բաւականութիւն և հաճոյք ստանալ։

Թէ այս փոքրաթիւ զարգացած դասակարգին զոհացում տալու համար և թէ կիսկատար կրթութիւն ստացող ստուար մեծամասնութիւնը հետզհետէ այդ կարգի երկերու ընտելացընելու և անով անոր մտաւորական զարգացման մակարդակը

բարձրացնելու համար հարկ անհրաժեշտ է մեծ թուով հրատարակել գիտական — մասնագիտական աժան գրքեր, և այս պարտքն ալ գլխաւորաբար կը ծանրանայ հանրեհանելու և հրատարակչական ընկերութենց վրայ. վասնզի, ինչպէս յիշեցինք, անհատէն իրաւունք չ'ունինք զոհողութիւն պահանջելու։

Եթէ Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան հրատարակած գրքերու ցուցակը աչքի առաջ ունենանք, պիտի տեսնենք որ մեծ մասամբ թարգմանուած և կամ հիմնականուած վէպեր են, շատ քիչ Գիտական – Մասնագիտական երկեր կան։ Եթէ հրատարակչական ընկերութեան նպատակը լոկ շահասիրութիւն չ'է, եթէ կուզէ ամրողջ հասարակութեան զարգացումը և անոր մէջ ընթերցասիրութեան տարածումը տեսնել, պարտաւոր է մեծ տեղ մը տալ մեր յիշած անհատական ոյժերէ բարձր եղած գիտական – մասնագիտական գործերու հրատարակութեան։ Վէպեր հրատարակելը շատ դիւրին գործ է, որովհետև բոլոր ազգայ մէջ ամենէն շատ կարդացուած գրքերն վէպերն են, ամեն հրատարակիչ քիչ շատ յոյս ունի հրատարակած վէպէն արդիւնք մը ստանալու, սակայն երբ խնդիրը գայ Գիտական – Մասնագիտական երկերու, ամենէն յանդուգն հրատարակիչն, ամենէն աշխի և գաղափարական հեղինակն կը վարանի և կը յուսահատի։

Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը իր նպատակէն հեռացած կը լինի, երբ իր հրատարակած ժողովրդական պիտանի գրքերուն արժէքը շատ բարձր դներով կը նշանակէ, այս պարագան դժբաղդաբար կ'ստուգուի եթէ իր կողմէ հրատարակուած գրքերու ցուցակը և անոնց արժէգները աչքի առաջ ունենանք։

Այս պարագաները նկատի ունենալով կարող ենք դնահատել արժէքն և կարևորութիւնն այն գրքին որ հրատարակած է Տօք. Ն. Տալաւարեան Հիմնարի, Մանրէաբանութիւնը թէև նոր գիտութիւն մըն է, սակայն մանրէներու (Microbe) մեր առողջութեան տեսակէտով ունեցած դերը այնքան կարևոր, այնքան հետաքրքրական է որ ամեն մարդ պարտի գանոնք լաւ ճանչնալ, անոնցմէ զգուշանալ և անոնց հետ վարուելու եղանակը գիտնալ. քանի՛ քանի՛ հազարաւոր մարդիկ մանրէներու վրայ այս տարրական ծանօթութիւնը չունենալով զրկուած են իրենց թանկագին և այնքան պաշտելի եղած կեանքէն . . . ։

Ա.ելորդ կը համարիմ այս տեղ երկարօրէն խօսիլ մանրէներու և անոնց կատարած զանազան գերերուն վրայ, միայն

այսշաբը յիշեմ որ ներկայ դարս, մանրէէ՝ ըսբ է, և մանրէն գի-տուններու մեծագոյն մասին մեծագոյն կրազումն. այս մասին մեզ կը խօսի Տաղաւարեան էֆէնտիի հեղինակութիւնն և լիուլի կը գոհացնէ մեր հետաքրքրութիւնը։

Այս տեղ չպիտի զրաղիմ նաև գիրքը վերլուծել. Մանրէա-բանութիւնը շատ յստակ և մեկին կերպով մեզ պիտի ուսուցա-նէ մանրէներու մասին ինչ որ պէտք է, հիւանդութեանց բուն պատճառը մեզ պիտի բացատրէ, ինչպէս նաև անկէ զերծ մնա-լու միջոցները, տարափոխիկ հիւանդութիւններու մասին ամե-նանոր տեղեկութիւններ պիտի տայ։

Գրքին բացատրութեանց ձևերը, դասակարգութիւնը շատ յաջող է, իր ամբողջութեան մէջ այնքան յաջողուած գործ մըն է այն, որ կարող է օտար համալսարաններ ու ուսանողներու ձեռքին մէջ իբր առաջնորդ – դասագիրք մը ծառայել, հետե-ւաբար հայ բժշկական դասը պէտք է իր զրադարանին ամենէն մեծ զարդը նկատելու է։ Պատկերներու յաջողութիւնն առան-ձինն յիշատակելու արժանի է,

Իսկ դալով լեզուի մասին, անկեղծօրէն կը խոստովանինք որ գրաբարի ազդեցութիւնը շատ զգալի է, այսօրուայ տիրող լե-զուն, տիրող ալխարհարառն է, մանաւանդ դիտութիւնը ժողո-վրդականացնելու առեն, մոռնալու չէ նաև անոր խօսած լե-զուն։

Գիտական – մասնագիտական բառերու հայացումը գործին յաջողուած մէկ մասն կը կազմէ, մանաւանդ որ շատ օրինակելի կերպով հայերէն նորակազմ բառին մէջ գրուած է նաև ֆը-բանսերէնն, չիմաստութիւն, անստուգութիւն չը պատճառելու համար։

Մի առանձին ուրախութիւն զգայի այդ նորակազմ բառե-րու շարքին մէջ տեսնելով գործածութիւնը ֆրանկոփ (syphilis) նորակազմ բառին, որը առաջին անգամ կազմելով Մ. Նուպար-եան էֆէնտիի նուիրելու պատիւն ունեցած եմ 1895ին Ալեքսէյ-լրագրի միջոցաւ։

Տօք. Ն. Տաղաւարեան էֆէնտիի յաջողութիւնը շնորհաւորե-լով, մանաւորապէս կը խնդրեմք որ իր ֆրանսերէն լեզուաւ հը-րատարակելիք Տիեզերք և իր կողմնակից գրքին հայերէնն ալ հա-նի նուիրել՝ հայ հասարակութեան, որով աւելի օգտակար ծա-ռայութիւն մը ևս մատուցած պիտի լինի, հրատարակելիք Ա-ռաջնորդարանի կարևոր գործին հետ։

7/19 Յունվար 1898
Պոլիս

ՏՕՔԹ. Ա. Ց. ՓՇՇԱՍՏԱՆ

ԳԱՃԱՃՆԵՐ

Պէտք չէ այլ ևս առասպելի կարգը դասել այն գաճաճներն որոց վրայ բանասաեղծն իր էդդա-ին մէջ կ'խօսի որպէս թէ արագիլներու դէմ պատերազմ կ'մղէին։ Արդ՝ այդպիսի գաճաճներ վերին Եգիպտոսի խորերը կը գտնուին։ Ստուգիւ՝ այդ թզուկներն երբեմն մի քանի մարդաբաններու հետաքրքրութիւնը կը գրաւէին, բայց այժմ ամենուն ուշադրութիւնը կը շարժեն, և բազմաթիւ գիտուններ կը ջանան անոնց վրայ նոր տեղեկութիւններ ստանալ, քանի որ Սդանլէյ անոնց գոյութիւնը երևան հանեց։

Ինչպէս Ափրիկէի, նոյնպէս Սէյլան կղզւոյն մէջ կը գտնուին գաճաճներու ցեղեր, որ հետզհետէ կը նուազին։ Այնպէս կը թուի որ այդ գաճաճներն Հնդկաստանի առաջին բնակիչներն են եղած։ Դրաւած էին նաև Ափրիկէն՝ Բարեյուսոյ գլխէն մինչև Սահարա, և վերջապէս քարէ դարի մէջ կը բնակէին այդ մարդակերպ կապիկներն Եւրոպիոյ կեդրոնը։

Անգլիական թերթ մը կ'ըսէ՝ թէ 1893ին Տոք. Կ. Կուտ Պարանձայի արևելեան կողմը խուզարկելու ժամանակ գաճաճներու գիւղ մը գտաւ, շատ երկչոտ արարածներ՝ որ օտարներէ խոյս կուտան։ Առաջին անգամ ատոնք գտած են կ'ըսուի Ատլանտեան ովկիանոսը։ Ապտանտական կետեր կը վարեն։ Իրենց բնակութեան վայրերն են հիւղակներ որ չինուած են ծառերու կոճղերէ և տերևներէ. մակութեան անտեղեակ՝ իրենց ուտեստը լոկ օրսի թռչուններ են։ Սէյլանի գաճաճներ՝ երբ տարբեր ցեղէ, իրարու լեզու չեն հասկնար. հետևապէս որքան ցեղ նոյնքան բարբառ կը գտնուի։ Բայց ափրիկեան գաճաճն բարոյական յատկութիւնէ զուրկ չէ. անվնաս, բարեսիրտ, հիւրասէր է. ունի պատուոյ զգացում. մինակին է և անհատատարիմ. ամուսինը սաստիկ կը պատուէ։ Գողութեան և մարդասպանութեան վրայ գաղափար չունի, սակայն մտովի շատ տկար։ Անկարելի է Սէյլանի գաճաճներուն մինչև երեքթիւը համրել սորվեցնելը, և այս պատճառաւ՝ տարիներէ իվեր՝ միսիոնարներու թափած բոլոր ճիգն զանոնք դարձի բերելու ապարդիւն մնացած է։ Շատ բարձր բաներ են իրենց խմացողու-

թեան համար գերադոյն էակի մը գոյութիւնն և հոգւոյ ու մարմնոյ տարբերութիւնը։ Սէյլանի 2220 թզուկներէ միայն անհատ մը քրիստոնէութիւնն ընդունած է։ Ափրիկեան գաճաճներն համեմատաբար աւելի մտացի են, թէև անորոշ ու տարտամ գաղափար ունին բարձրագոյն էակի մը վրայ, զոր Ձէր կ՚անուանեն։ Հետաքրքրաշարժ է անոնց աղօթքի մի ձևը, զոր կը կարդան յուսահատական վայրկեաններու մէջ.— եթէ գոյութիւն ունիս՝ դու մեծդ էակ, ինչո՞ւ կը թողուս որ կորսուինք. մենք քեզմէ ոչ կերակուր և ոչ զգեստ կը խնդրենք մենք գոհ պիտի մնանք մրջիւններով, օձերով և մուկերով ապրիլ։ Եթէ մեզի լոյս տուիր, ինչու համար կը թողուս ու ջնջուինք։—

Շատ հաւանական է որ այս բողոքն ենթադրելու դէմ է, որ մինչև անդամ անշնաս գաճաճներ՝ իբրև վայրի անասուններ հալածելու սովոր են։

Թ. ԽԱՆՋԵԱՆ

ՕՐ. ԹԱԳՈՒՀԻ ՏԱՄԿԱՃԵԱՆ

Գանի՛ ահաղոքելի և յանկարծահաս հարուածներ ունի մահն, Անխտիր՝ կ՚ընկճէ բարերաղն ու դժբաղդն, ուրախն ու վշտացեալն, երբ յանկարծ կենաց վերջին վայրկեանը կ՚հնչեցնէ, և ընտանեկան յարկէն անձնուէր հոգի մը, զգայուն սիրտ մը կ՚անհետի։

Ահա այսպիսի հոգի մը կորոյս մեր իգական սեռն, յանձին Օր. Թ. Տամկամեանի, որ ոչ միայն սիրելի էր իբրև մայր, թէև ամուրի, իբրև գորովալի քոյր, այլ և իբրև գթասէր և ուսումնասէր անձ մը։

Օր. Թ. Տամկամեան տեղւոյս կրթական գործին, ինչպէս նաև բարեսիրական հիմնարկութեանց մէջ իր աջակցութիւնն չէ զլացած։ Գանիցս Ս. Հռիփսիմեան վարժարանի հոգաբարձուհի և Հոգատար Ընկերութեան գործօն հիմնադիրներէն մէ եղած է։ Իր ողբալի մահուամբն իր ընտանիքը կ՚կորուսէ անձնուէր և հոգասէր սիրտ մը, իր ազգականներն ու բարեկամներն հոգածու հոգի մը։

Շատ սրտաշարժ և վայելուչ չքեղութեամբ կատարուեցաւ իր յուղարկաւորութեան հանդէսն: Ազգական ու բարեկամ վուխտացած էին իրենց ներկայութեամբ և ծաղկեպսակներով արտայայտել իրենց յարգանքը ու վիշտը: Հոգ. Պրբախանամ Ընկերութեան որբ սանուհիներն՝ ի նշան իրենց երախտագ իութեան՝ կ'ընկերանային դագաղին ծաղկեփունջ ի ձեռին: Պրուսիի մը, կրօնական արարողութենէ ետք՝ կարդաց սրտաչարժ շեշտերով դամբանական մը գրուատելով հանգուցեալին բարեմասնութիւնները, յայտնելով որ անոնց յիշատակն վըշտաբեկ սրտերու մէջ անջնջելի պիտի մնայ:

ՍԵՔՈՑ ՔԱՂՔԱՑՈՑՔՆԵՔ

ԱՐԶԱԿ ՓԵՐԹՈՒԱԾ

Սիրո՛ւն աղջիկ, ըսե՛ իմծի, ո՞ր երիտանք, ո՞ր ճեռւանանք աշխարհի աղմկալից ժխորէն, մարդերու ժպիրի աչքերէն խուսափելու համար, Ո՞ր վոխադրենք մեր անմեղ սէրը որ չի պղծուի, մեր սէրը՝ որ շուշանէն աւելի մաքուր, եւ երկնքէն աւելի կոյս է:

Կ'ուզե՞ս, ճեռւաւոր չեռնադաշտերը վախչինք, կոյս անտառներու մէջ ապաստանինք, ուր տեղ մշտադալար թուռւռումները մեզի բնակարան ու վայրի շուշաններ մեզի անկողին ընեն: Մեր սիրոյ հովուերգութիւնը խաոսենք անտառին թռչուններուն գեղգեղանքին եւ վայրագ հովերու սուլտումներուն ճետ:

Կ'ուզե՞ս, գեղիւռներու թեւերուն վրայ թռչինք, ամեր վայրիայող գիրկը մեզի օրօրոց ընենք, եւ ճեչտօրօր օրօրումներով մեր սիրոյ երազները հովահրեղեք ամեր գոլամուշ շունչովը ա, ճո՜ն քնանանք ամուշակ երազներու մէջ թաղուած:

Կուզե՞ս, թեւեր առնենք, արծիւի թեւեր, սուրանք, սլանանք մինչեւ արշալոյսի շիկակարմիր ալիքները, ամեր կոյս, վսեմուկ, մաղմիսղ լոյսերուն մէջ դնենք մեր սիրոյ ' ս յ ւերժական բնակութիւնը, ու ճո՜ն վայելենք մեր սէրը:

Կուզէ՛ս, վեր եյլենք, վե՛ր, երկնքի անմատոյց խորհրդիւնները մէջ միրճինք, եթերի կոյս կապոյտին մէջ չոգանք հեշտասուփ, հոն հեղոյ վեր սիրոյ բովանդակ հոգիները վինչեւ յեռիս պուռը, վինչեւ որ անոր մէջ մեռնք ալ չոհնունք, հաչինք, հառնինք, ու մեյմեկ կոյս շիթերն ըլլանք անոր կոյս կապոյտին։

Կուզէ՛ս, աւե՛լի վեր եյլենք, աստղերէն, արեգակներէն ալ վե՛ր. յարդգոյն կաթնորակ ամպոնդիներուն մէջ ընկղմի՛նք եռացող վիգահամճներու խորը խորասուզինք, այրող գոհութերը մեզի պաակ եւ բռնկող արեւները մեզի վերարկու հագնինք, ու հո՛ն մեր սիրոյ հուրը խաւնե՛նք անոնց կրակին, ու մենք ալ անոնց հետ այրի՛նք, բռնկի՛նք վոխուի՛նք, այլակերպի՛նք, ու մեյմեկ կոյս-հատիկներն ըլլանք այն կոյս-աշխարհքին։

Ըսե՛, ո՛վ աղջիկ, ո՞ր տանիմ քեզ որպէս զի ո՛չ մեկ չանդուգն ձեռք քեզի չի հասնի. ո՛չ մեկ աղտոտ բան քեզի չի դպչի։ Ո՞ր երթանք, ըսե՛, որ կարող ըլլանք գիրար չիտնի վայելել եւ ուր ո՛չ մեկ ոգեղ սեւսրան կամ տիւր վնասուի մեր սէրը չի վրդովէ, մեր սէրը՝ որ շուշանէն սուեղի մաքուր եւ վիւսվիս, եւ երկնքէն աւելի կոյս ու փափուկ է . . . ։

Եւգոկիա ԾՈՂՀԱՆՆԻՍ ԴԱՋԱՆՃԵԱՆ

ՈՒՏՈՂՆԵՐ ԵՒ ՈՒՏՈՂՆԵՐ

Դիտած եմ թէ աշխարհս միշտ շատակերներով լեցուած է։ Օրհնակներդ չեն սպահիր։

Դիցաբանութեան մէջ Կռոնոսը ունիմ որ իւր զաւակներդ կ'ուտեր առանց որ եւ է ցաւ մը զգայու ո՛չ աստուհսին եւ ո՛չ աղեացդ մէջ։

Թանթալ կ'ուզեր ուտել, բայց չեր կրնար։

Սուրբ գրոց մէջ նաւ պնակ մ'ոսպի փոխարեն իւր անդրանկութեան իրաւունքը եղբօրը՝ Յակոբին՝ ծախեց թեպետ ան ալ վերջին գինը տեղանաւոր չրաւ։

Միջին Դարուն Իւղոլեն իր գաւակները կ'ուտէր, մինչեւ որ ան ատոնց պահելու հաւատ։ Տղաքը կ'վախցնեն խրտուիլակի (croquemitaine, *խրտվիլակոյս*) սպառնալիքով, որ կ'երեւի թէ հինչպատուր շատակեր մ'էր։

Ուխիմ նաեւ Շարան՝ որու մեծ եւ արգասաւոր գաւառ մը չէր բաւեր։

Լուկուլլոսի հարստութիւն առնել մարդ գիտէ։

Ուխիմ նաեւ Կարկանդուան, Ռապլեէի դիւցազնը։

Sofpor Վէրօն, Ս. Տիւմա հայր, Պսօն Պրիս երեւելի շատակերներ եղեն։

Երբ մին մը գլուխ դարձնել առանց վախնալու թէ միսս կ'բռնուի (torticolis) պիտի տեսնեմ որ թէ առնուիմ եւ թէ առնասուիմ միշտ թէ՛ կերած են, թէ կ'ուտեն եւ թէ պիտի ուտեն։

Օրինակի աղագաւ,

Սարդերը ճանճերը կ'ուտեն, գայլերն ալ փափուկ գառնուկները։

Թռչուններ որդերը կ'ուտեն։

Կատուներ մուկերը կ'ուտեն։

Շանաձուկերը խոշոր ձուկերը կ'ուտեն, խոշորներն ալ փոքրները կ'ուտեն։

Չկնորսը բռնած ձուկերը կ'ուտէ։

Սոխծներ եւ վագրերը պզտի երեխաները կ'ուտեն, աղուէսը ախոր եւ հաւ։

Կաղնաճասկերը իրենց վարձակալներ կ'ուտեն։

Մեղուաւորներ եւ փասաթաններ իրենց յանախորդները կ'ուտեն։

Բժիշկներ եւ դեղագործներ իրենց հիւանդներ կ'ուտեն։

Բանաւորներ յոգիրներու տարեգիրը կ'ուտեն։

Վարժապետներ ոչ . . . պոչ կ'ուտեն։

Թոռոմներ բառերը կ'ուտեն։

Թասրոնի կամ [illegible] ասղերը իրենց տէրհներ կ'ուտեն։

Ամպարաւներ թուր կամ խր կ'կլլեն։

Հարուստի տղան իրենց հարստութիւնը կ'ուտեն, մանաւանդ երբ հայրիկը խակը աւուր գոցած է։

Անգիլացիք փռանսացոց գորտեակեր կ'ըսեն։

Նկեղեցականներ առարեր կ'ուտեն։

Տղամ՝ քաց ի սևոնցմէ որ պէտքնով կ՚ունենին, ասիկիկ կ՚ունեն:

Պռոները այծ եւ մինչեւ անգամ հշ կ՚ունեն, թեպետ ասիկա արգելք մը չ՚ըլլար սասնց թուոյն հետզհետէ աւելնալուն:

Վառարաններըն — ինչպես նաեւ սալամանտրերը — ածուխ կ՚ունեն:

Դիւրագրգիռ մարդիկ իրենց խօսակիցը կ՚ունեն: Եթէ իրենց խօսակիցը աղուորիկ կին մ՚ըլլայ կորուստը այնչափ մեծ չ՚ըլլար:

Աւանակները իրենց ցորենը չ՚հասունցած կ՚ունեն:

Աղխասները սատկած կովու միս կ՚ունեն:

Եասահրմ հացը իրենց գրպանին մէջ կ՚ունեն:

Տեղ մը պօռասյի մէջ խաղացողները ձերմակ հաց կ՚ունեին, հիմայ հացաթան կ՚ունեն:

Ապուշները չոր խոս կ՚ունեն: ասոր համար է որ ասոնք ապրանքը հետզհետէ կը սուղնայ:

Պոռնիկները, [illegible], [illegible], սրճարաններու մէջ ծառայող կիները, պզտի դերասանուհիները, վերջապէս Եւրոպի բոլոր աղջիկները անանկ աղուոր կերպիւ կ՚ունեն մարդիկը որ ես կ՚զարմանամ թէ ինչ մեծ հրաշքով մարդկային սեռը երկրի վրայէ անհետացած չ՚է մինչեւ ցարդ:

Թ—է՛. ԳԱՐԵԳԻՆ ՅՕՐԱՍՍԱՀԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Յ ՏԱՌԻՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայերէն լեզուի տառերուն մէջ ց գիրը մին է անոնցմէ, որոնք քրիստոնէութեան ու դիտողութեանց առարկայ եղած են ուրիշներէ աւելի: Աեսրոպեան տառերուն մէջ չկան այնպիսիները, որոնց արտասանութիւնը խակապէս յար և նման ու համաձայն ըլլայ: Ունինք արդարև թէպէտ կոչուած տառեր, ինչպէս ձ, ծ, ց, բ, պ, փ, դ, տ, թ, գ, կ, ք, չ, ճ, է, բայց տանք արտասանական երեք որոշ աստիճաններու կը բաժնուին. տառչիններըն մեզմ, երկրորդները միջակ, իսկ երորդները թաւ ձայն ունին: (Թէպետև Պօլսոյ ուսումնականութիւնը և մամուլը այս մասին տարբեր սովորութեան մէ կը հետևի, բայց նախնեաց տառադարձութեան օրինքը, վկնաբիկի ու վիենայի Մխիթարեան Հայրերուն ընդունած դրութիւնը, Աբեղեան Հայոց արտասանութեան ու տառադարձութեան եղանակը, վերջապէս Աբեմեան Հայոց բաղմաթիւ դատառներու մէջ, նոյն իսկ Պօլ-

ոոյ հասարակ ժողովուրդին բերանը մինչև ցարդ իբրև անգին հնութիւն պահուած սրտատանութեան ձևը կը հատատանէն մեր տեսութիւնը։) Ցիբաւի Մեծն Մեսրոպի պէս հանճարեղ ու նրբազնին, ներհուն ու կորովամիտ անձի գործ չէր մեր այբուբենը խճողել այնպիսի տառերով, որոնք իսկապէս համաղօր ըլլալով աւելորդ էին։

Վերոյիշեալ տառերուն, ինչպէս նաև միւսներուն իրարմէ ունեցած տարբերութիւնն ըմբռնած եմ թէ իբրև գաւառացի և թէ իբրև հետաքրքիր ու դիտող ուսուցիչ։ Ըստ այսմ, համակարծիք չեմ Աբեմեան Հայոց ուսեալ դասին որ սկզբնատառ յ գիրը ճիշտ հի պէս կ'արտասանէ։ Հ և յ բնութեամբ իրարմէ տարբեր են և իրարու հետ ո և է առնչութիւն չունին։ Առաջինը հագագային ու թաւ արտասանութիւն մ'ունի, մինչդեռ երկրորդը կակուղ ու մեղմ հնչումն մը։ Չ կը համեմատի ֆրանսերէնի հնչեալ h ի և թուրքերէնի (հէ և յա) գրերուն, մինչ երկրորդը մեր հ գրին կակուղ ու բաղաձայն հնչումը ունի և կը համապատասխանէ թուքերէն (հէ) (hայի ասիկէ կամ լաֆզիկէ) և ֆրանսերէն y գրին՝ երբ ուա ձայնաւորի մը հետ գործածուած է։ Ա. այս մեր ունեցած ապացոյցներն են։

Ա· Բարեբաղդաբար յ գիրը իր նախնական կակուղ ձայնը պահած է բառերուն մէջտեղը և վերջը, ինչպէս այս, քայլ, սոյն, գնայաք, կայր, լսին. փայտս, Աւյաս, և այլն, բայ, խոյ, թէյ, հայ, նոյ, և այլն։

Բ· Այն յատուկ անուններըզ որոնք Մեծն Մեսրոպ և մեր նախնիք յով կը գրէին, օտարք կը գրէին ու կը կարդային բաղաձային գրի հ ձայնով (թուրք· հէ և ֆրանս. y,) ինչպէս Յովսէփ, Յովհան, Յոբ, Յակոբ, Յապպէ, Յորդանան, Յաղկերտ, Յոյն, Յունիա, Յուլիոս, Յանոս և այլն, որոնք ցայսօր կը հնչուին Հոսէփ, Հոհան, Հոբ, և այլն։

Գ· Օտարներէ առնուած բառերզ որոս մենք յ ով կը գրենք, անոնք կը գրեն բաղաձային հ ով, ինչպէս յահինթ, յամայր, յովազ, յասմիկ, յամբայր, որոնցմէ ոմանք թերևս մեզմէ փոխ առնուած են։

Դ· Ց տառը մեր լեզուին մէջ ամենէ աւելի լծորդ է հ տառին հետ, ինչպէս յերկնանալ, երկնանոլ, յեռանդ, եռանդ, յերկար, երկար, յեղանակ, եղանակ։

Ե· Լեզուին մէջ թէև կը տեսնուին ասկաւաթիւ բառեր, ուր անխտիր յ և հ իրարու տեղ կ'անցնին, ինչպէս. յատոց, հատոց, յօսել, հօսել, յօտաւ, հիւսել, յօրոյ, հօրու, յանդրիճեմ, հանդրիճեմ, բայց սակայն աղաւաղութեան ու դիպուածի արդիւնք մանաւանդ կը նկատեմ, քան նըմանածայնութեան և լծորդութեան։ Ընդհակառակն յ գիրը դրեթէ միշտ կը գործածուի ա տառէն առաջ, որու հետ շատ սիրով կ'ապրի իր մեզմ ու թոյլ հնչումով։ Այս պարագային յ տառին հնչումը շատ ճկուն ու առաձիգ է, այնպէս որ կարելի է սղել զայն իր յենարանն եղող ա ին հետ և ամիփոփել անոր մէջ, ինչպէս յառաջ, առաջ, յաջողութիւն, աջողութիւն, աղաչս, յաղաչս, այրատ, յայրատ, յարդոյ, արդոյ, և այլն։

Զ· Ժողովուրդը ուրեք ուրեք մինչև ցարդ սկզբնատառ յ գրին նախնական հնչումը պահած է, ինչպէս՝ յարդ, յունապ, յօրանջեմ, յեսուն, յեթ, յետոյ, յետին, զորս կ'արտասանէ երդ, եհունապ, եօրոշտալ, երեժտալ, և այլն։

Է· Սկզբնատառ յ գիրը գաւառացի ժողովուրդին բերանը աւելի յա-

ճախ իր զօրութիւնը կորուսած է, բայց երբեք հ գրին արտասանութեամբ պահուած չէ, ինչպէս ուղարկեմ (յուղարկեմ), ունք (յունք), խոտակ՝ ստակ (յատակ), ատակ (յատակ), արմար (յարմար), իշոցք (յիշոցք), ամենամ, էմենամ (յամենամ), ակօր (յակօր), ովհաննէս (յովհաննէս), արութիւն (յարութիւն), ուդայ (յուդայ), և այլն։

Ը. յ գիրը իր կակուղ ու մեղմ հնչումով միայն նախդիր ըլլալու յարմարութիւն ունի։ Խազաձայն գրով սկսող բառերուն նախդիրն է ի. ի քարի, ի գրի, ի թղթի, ի մարդոյ, ի չարէ։ Ձայնաւորով սկսողներուն նախդիրը ասոր մօտ ձայն մը պարտէր ունենալ և ոչ հագագային ու թանձր հ ի արտասանութիւն, զոր սովորաբար կուտանք սկզբնատառ և նախահր չեն։ Յաղթիլ, յառնէ, յանիրաւութեան, յոզորմութենէ, եթէ արտասանուին էօղթէլ, էառնէ, և այլն, թէ ի նախդրին լծորդ, այլ ծբկուն ու առաձիգ յ գիրը երևան կ'ելլէ և թէ իր նախնական ձայնը արտաբերած կ'ըլլանք։ Ի նախդիրը կարելի չէր և պէտք չէր գործածուիլ, վասն զի անիկայ կակուղ չէ և իր ձայնաւոր հնչումը կը պահէ միշտ առանց թէքուելու, է ալնէ, է առնէ։ է ողբմութենէ։

Մենք այս խնդրոյն մէջ ճշմարտութեան վերահասու եղած ըլլալու յաւակնութիւնը չունինք։ Մեր կարծիքը միայն կը յայտնենք այս մի քանի տողերով, զորս միևնոյն առեն հրաւեր մը կը նկատենք ազգային բանասիրութեան հմուտ ու փորձառու գրիչներու՝ իրենց ալ թուիքը յայտնելու այս մասին։

Ա. ԱՄԱՏՈՒՆԻ

ԾՐԱԿՈՉ

Ի ՆՊԱՍՏ

ՀՈԳ - ՈՐԲԱԽՆԱՄ ԵԻ Ս. ՆԵՐՍԷՍԵԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒ

Ա յս երեկոյթը կազմակերպուեցաւ ամսոյս 8 կիրակի գիշեր։ Կարգադիր մասնախմբին անդամները կը կազմէին հետեւեալ անուանի անձնաւորութիւնները։

Մ. Գուճլեանի	Տնօրէն	Օմ. Պանոյէ	ճեղքին
Մ. Կորկօլի	»	Քրէօֆ Լէօնէէ	»
Մ. Կանտօն	»	Կոչ Ընկերութեան	
Կ. Արապեան,	էջ.		
Ս. Սպարթալեան,	»		
Զ. Թազթազեան։	»		

Երեկոյթին զուտ հասոյթը 350 լիրայէն աւելի կը հաշուուի։ Պարելը աննման յաջողութեամբ ուղղեցին Ռուբէն Աղաջարեան, Զարէհ Էքիզլեր, և Յակոբ Էլմասեան էջ. անդամները։ Գո-

հունակութեան արժանի էին նաև Հոգ – Որբախնամի և Ներսէսեանի անդամուհիներն ու անդամներ որ ջանք չէին խնայած հանդէսը կատարեալ ընելու համար։

* * *

«Ես արշալոյսը ատեցի . . .»

ԼՈՐԴ ՊԱՅՐՐՆ

«Կիրակի գիշեր արտաքոյ կարգի չքեղ երեկոյթ մը ունեցանք» պիտի ըսէի, եթէ քիչ մը չատ դասական ըլլալէ չի վախնայի։ Այդ գիշերուան հանդէսը որակելու համար նոր բառ կամ բացատրութիւն չեմ կրնար գտնել ու եթէ կարենայի ստեղծել՝ այդ խօսքը ամփոփումը պիտի ըլլար հրաշալի անուշութեամբ սահող ժամերու, սիրաբոյր երազի մը ամբողջութեան, որ անցնելէն ետք տակաւին արտում ու դողացող հետք մը կը թողու կուրծքի ծալքերուն տակ։ Դիտէի՛, թէ կոյր Հոմերոս մը յուզելու և աստուածացընելու կարող այս քաղաքին բնակիչները արուեստագէտի հոգի, երանութեան համար հալող սիրտ ունին, անդիտակ էի սակայն թէ հոս ձմրան մէջ գարուն կրնան ստեղծել, կեանքի գարուն մը մէկ գիշերուան, երանաւէտ թռիչներու ու ծիծաղներու, որ դարնան պէս, երազի պէս, սիրոյ պէս վաղանցուկ եղաւ սակայն։ Ջուտ Հայեր էին դեղեցկութեան ու փափկութեան զաւակները, հաւաքուած հոգ՝ էն աղուոր ու հիանալի փունջը կազմելու ու չչոթելու անգամ մըն ալ, թէ հոս մայրերը՝ հրեշտակներ կը ծնին։

Ս. Հռիփսիմեանի սրահը նուրբ ու սքանչելի դեղեցկութիւն մը հագած էր, կնային նուրբ ձեռներով անշուշտ։ Ըսին թէ Տիրին Զիլինկիրեանի և Պ. Ընքաւպաշեանի կը պարտինք տեւական զարդ սրահին արդուզարդի ճաշակը։ Ժամը 10 ½ ին սկսաւ ու մինչև լոյս թեթև ոտքերը թռչտեցան, այտերը անհուն ժպիտով մը փոզփոզուն։ Տեսած էի Պօլսոյ պարահանդէսները։ Անբաղդատելի է Իզմիրինը։ Սգաւոր մեծ վարպետիս իրը ներկայացուցիչ վայելած այդ գիշերս՝ անջնջելի պիտի մնայ սրտիս մէջ։ Պօլիս ամեն բան՝ քիչ մը չատ Ուրէնէ կը բուրէր։ Ազնիւ-նրբութիւն հազուագիւտ է հոն։ Իզմիրցին չէ՛ է, բառին դրական իմաստովը։ Ներուի հոս ըսել թէ դաւառացիներս մեր հոգիին հետ բուսած նախապաշարում մը ունէինք պարահանդէսի նկատմամբ։ Հովիւ մը ոչ Շոբէն կը հասկընայ՝ ոչ ալ Վերտիէն

կ'արտասուէ։ Իզմիրցին արեւելից ուրիշ զաւակներուն չի նմանիր։ Ան ժպտիլ կուզէ։ Նոյն իսկ էն խոր վիշտերուն մէջ կը ծիծաղի։ Այդ ծիծաղը վրխտուրի կը նմանի, որ անդունդը կը ծածկէ։ Ու ես սիրած եմ այդ ծիծաղը։

Խաղերը դոյն ու լեզու ունէին։ Պարասրահը ամբողջ, նահապետական ընտանիքի մը պատկերն էր։ Այդ սիրոյ դիշերներու մէջ ժամանակը կը ջնջուի։ Երեկոյթը նոր սկսած էր կարծես, երբ պատուհանէն ներս խուսափող քանի մը կապարագոյն չողեր, ըսին թէ արշալոյսն է։ Եւ «ես այդ արշալոյսը ատեցի...»

* * *

Վերջին գոգրէլը բուռն ու սրտագին յուզման մը տակ անցաւ։ Ջեռք ձեռքի տուած անհուն բոլորակին օղակները քակուիլ սկսան։ Բաժանումն էր որ կ'սկսէր։

Ինչ ատենէն սրահը ամայի մնաց։ Հատնող ու հատցընող, թռիչ ու երազ մեկնած էին։ Պզտոր ու ճնշող առաւօտին դանդաղ նշոյլներուն տակ թափառեցայ վայրկեան մը։ Սրահը կը մնայ։ Կըսպասէ ան՝ ուրիշ երազուն և սիրարբոյր դիշերներու, որ պիտի դան։ Ու կը խորհիմ տրտմագին թէ անոնք ալ պիտի վերջ ունենան այն դալկահար էակին պէս, որ հոդ, այդ սրահին մէջ — դեռ չի լմնցած տարին — կ'երգէր։

«... Շարժեցէք ղեփիւռք ալիքներն վէտ վէտ,
Խառնեցէք զարտասուս այս ջրերուն հետ ...»

Իզմիր Ռ. ՈՐՔԵՔԵԱՆ

* * *

Այս առթիւ խմբագրութիւնս պարտ կ'համարի յիշատակել երեկոյթի պատ. Յանձնախմբի չնորհակալութիւնները՝ ամեն անոնց որ սիրայօժար ընդունեցին իրենց ուղղեալ տոմսակներն և ի մասնաւորի Աղնիւ Տիկնանց և Օրիորդաց որ իրենց չնորհալի ներկայութեամբն աւելցուցին շուքն ու փայլն Հոդ-Որբանոցի և Ս. Ներսէսեան որբանոցներու ի նպաստ սարքուած սոյն երեկոյթին։

ՊԱՏՃԱՌԸ Ի՞ՆՉ Է

Կ՚Հարցնեմՙ և հարցնելու ալ կատարեալ իրաւունք ունիմ կարծեմ— քանի՞ պազ. ժողովը դրեթէ երկու ամիս յառաջ երբ չորս ընկերութիւններ միացած կ՚ուզէին հաւաքաբար պարահանդէս մը տալ, բացարձակապար մերժեց։

Ի՞նչ է պատճառը - որ այն առեն ինչ որ չորս ընկերութեանց մերժեց, այսօր այն ընկերութենց երկուքին հրաման տուաւ։

Ի՞նչ է պատճառը - որ այս Կոմիտէին եղած է թէ Հիւանդանոցը և թէ կրթ. Ընկերութիւնը զրկելով այս պարահանդիսին հասոյթէն։

Կա՞յ արդեօք աներևոյթ ձեռք մը որ ուզածին պէս կ՚շարժէ պազ. ժողովոյ անդամները խաղ դնելով ընկերութենց մէջ։

Պազ. ժողովը այն առեն պատճառ գտնած էր թէ պարահանդիսի հասոյթով եթէ Ագգը 100 ոսկի պիտի շահէր որու 0|0ին 60ը երկու որբանոցներու և 0|0 40ը կրթ. Ընկ. և Հիւանդանոցը պիտի տանային, միւս կողմէն ալ ազգին դրպանէն 200 ոսկիէ աւելի ֆռանկաց թաղը պիտի թափուէր արդուզարդի ծախուց համար և այս ալ այս նեղ պարագանեղու մէջ նկելի չէր։

Տնտեսագիտական տեսակէտով դովելի էր այս առարկութիւնը, բայց միթէ՞ այսօր վե՞րցած են այն պատճառները, միթէ այսօր աւելի յաջո՞ղ է շուկայի կացութիւնը, կամ արդուզարդի այս ծախքերը չպի՞տի ըլլան, կամ եթէ պիտի ըլլան միևնոյն հասարակութեան քսակէն եղնելով ֆռանկաց թաղը չպիտի՞ թափին

Ի՞նչ է պատճառը որ կրթ. Ընկ. կերպ մը հակառակութեան ոգւով կը վերաբերուին, և Հիւանդանոցին՝ անտարբեր աչքով։

Եթէ որբանոցներու մէջ ազգին որբերը կ՚խնամուին, կրթ. Ընկերութիւնն ալ մեր զաւակները կ՚դաստիարակէ և Հիւանդանոցին մէջ ազգին հիւանդները կ՚դարմանուին։

Այս տրամաբանական հարցմանց շարքը երկար է, ինձի, ինչպէս նաև ուրիշներուն, իբր առեղծուած կ՚թուի, և լուծման կ՚սպասեմ որ դիտողութիւններս ընեմ ըստ այնմ։

6|18 փետրվար 1898 Գ. Խ.

ԼՐԱԲԵՐ

Եւրոպական քաղաքականութիւնը զարմանալի դեր մը կ՚կատարէ ժամանակէ մ՚իվեր աշխարհիս այլ և այլ կողմերը։ Բազմազիմի դեր մ՚որ ըստ հաճոյս կ՚մեկնէ արդարութիւն և ճըշմարտութիւն, և իր օրինագրին հիմնական սկզբունքն է չհամաձոլութիւն, փառամոլութիւն և նենգութիւն, որոց առջև՝ մի-

ջազգային համերաշխութիւն, ժողովրդային իրաւունք, բարձր իտէաներ բնաւ նշանակութիւն չունին։ Գոյութիւն չունի այլ եւս այն վսեմախոհ քաղաքագէտներու ցեղն, որոց նպատակն էր մարդկային երջանկութեան շաւիղներն յարդարել, բարոյական ճշմարտութիւններ քաղաքականութեան զուգորդել եւ մարդկութիւնն առաջնորդել իր ճշմարիտ ճակատագրին, այս է իրաւանց յաղթանակին։ Կերպ մ'ամպարարութիւն է որ կ'վարէ, կ'մղէ ընդ առաջ արդի տիրապետներն, որ՝ ըստ տեղւոյ ու կլիմայի, սկզբունք եւ նկարագիր կ'փոխեն և աշխարհի տեսարանին վրայ կ'չարժին այնպէս որպէս թէ ինչ որ գործեն, օրինակի համաք, Մայրագոյն Աւետեաց մէջ՝ արդարութիւն կ'համարուի, թէեւ չինի այն ատութիւն, յափշտակութիւն, բռնութիւն, իսկ Եւրոպիոյ մէջ մի և նոյն արարքը ծանր քրէական յանցանքներ կ'նկատուին։ Մարդկային պատիւ, կեանք և ամենէ նուիրական իրաւունքներ ըստ տեղւոյ և պարագայի տարբեր գոյն ու անուն կ'ստանան կարդ մը կենցաղագէտներու աչքին, և միամիտ հանդիսականը չէ կարող ըմբռնել թէ ի՞նչ բանի կ'ծառայեն ուրեմն այն ճշմարտութիւններն որ դարերու անդուլ ճգանց գնով ձեռք ձգուած են և անկորնչելի գանձերու կարգն անցած։ Արդարև չկայ բացարձակ ճշմարտութիւն, չկայ բացարձակ արդարութիւն և ոչ իսկ այն աշխարհներու մէջ որ իբրև քաղաքակրթութեան կեդրոններ կ'հռչակուին, սակայն կայ գոնէ անոնց մօտենալու յոյսն մարդկային ընտիր հոգիներու մէջ։

Եւ արդարև՝ քաղաքագիտութիւնն՝ ինչպէս տարիներ առաջ՝ ամանորի առթիւ ալ ճշմարտասիրութեան և արդարասիրութեան ցոյցերով չէ որ թեւակոխեց նոր շրջանն, այլ բռնութեան, գրաւման, նենգութեան և յափշտակութեան գործերով։ Իսկ եւրոպական տէրութեանց ներքին տնտեսական, ընկերական, ցեղական, դատական խնդիրներու առթիւ ծագած ծանր, փոթորկալի և եպերելի խլրտումներու վէմեր՝ ինչպէս ժողովրդային նոյնպէս խորհրդարանական շրջաններու մէջ, ցոյց կուտան թէ քանի՛ ծարաւի են մարդիկ արդարութեան և թէ ո՛րքան անհեթեթ ուղղութեան մը կ'հետեւին անոնց ղեկավարներն երբ՝ փոխանակ անմիջական սիրտերից գոհացում տալու բանաւոր և արդար օրէնսդրութեամբ, արտաքին արկածալի արշաւներու, ասպատակութիւններու և փոխադարձ հակառակութիւններու մէջ անիրաւութեան և չփոթութեան նորանոր ապաւէններ կ'փնտռեն։

Բաւական է միայն ակնարկ մը նետել նախորդ մէկ երկու ամիսուան քաղաքական անցից վրայ համոզուելու համար որ մեծ տէրութիւններն իրենց ժողովուրդներու իսկական և օգտաւէտ անճուկներուն տարբեր ուղղութիւն մը տալու, դիւանագիտական յաղթանակներ տանելու համար խուլ հակառակութեամբ մը կ'մաքառին տար երկիրներու մէջ և այսպէս միջազգային ատելութեան որոմներ կ'ցանեն։

Անտարակոյս՝ թագուն համաձայնութեան մը չնորհիւ, Գերմանիա և Ռուսիա Մայրագոյն Արևելքի մէջ նորանշան չարժում մը կ'կատարեն, մին չինական ջրերն ուղարկելով տորմիղ մ'որ Փիաօ–Զօն նաւահանգիստը կ'գրաւէ, միւսն Բօրդ–Արթիւրն, ուր Ռուսական գրահաւորներ պիտի ձմերեն։ Զին չատ սուղ պիտի վճարէր երկու տէրութեանց միջնորդութիւնը Ճարոնի հետ կնքած հաշտութեան առթիւ, և կամայ ակամայ վճարեց, թէև գերմանական գրաւման չարժառիթը կ'համարուի մի քանի միսիոնարներու սպանութիւնն, չարժառիթ՝ որ քանի պատահի, և կրնայ պատահիլ, Զինու նաւահանգիստներն հետզհետէ իրենց վոխարինութիւն պիտի գրաւուին՝ այս սկզբան ուժով։ Եւ քանի՛ վտաւոր էր Բայզերի ճառն՝ երբ Բիլէն ճամբայ հանեց մի քանի մարտանաւ, իր Հէնրիխ եղբօր յանձնելով անոնց հրամանատարութիւնը, ի՞նչ կրակով ճառեց գերմանական գաղթաւին պետութեան հեռանկարին վրայ, որ, սակայն Դայդէ մի հեգնական յօդուածին առարկան եղաւ յանիրաւի։ Եւ քանի որ այս Արկոնաւորդեան արշաւանքը դէպ ի Սինէ աշխարհն կամոսկի գեղմն, այնքան պիտի գգուէ երբեմն ըմբոստ Ռայխսթագի ինքնասիրութիւնն՝ անշուշտ պիտի հաւանի գերման նաւատորմն աւելցնելու համար քանիցս առաջարկուած ու մերժուած ծրագրին գործադրութեան։ Բայց որպէս դի Փիաօ–Զօի գրաւումը չատ տարօրինակ չերևի, գերման կառավարութիւնը կ'ստիպէ Զինն որ 90 տարուան համար իրրև վարձակալ նկատուի, վարձքինը տիրոջ վճարել տալով, ինչպէս նաև երկաթուղոյ մը մենաչնորհը խնդրելով՝ իրրև հատուցում Գերման նաւապի մը սպանման ի Փիաօ–Զօ, մարդասպանին մահու պատիժը բաւական գոհացուցիչ վոխարինութիւն մը չհամարուելով ըստ նոր օրինագրի քաղաքականութեան։ Սակայն Ռուսիա աւելի հաւատ է, մի միայն ձմերելու համար Զինու հաւանութեամբ իբր հիւր կ'մտնէ ի Բօրդ–Արթիւր, ուր սակայն իր Սիպերիական երկաթուղւոյն վերջին կայանը պիտի հաստատուի,

ու այս առաւելութիւն ունի որ դէպ ի Ինդիան ուղևորելու ամենէ կարճ ճամբան է։ Արդէն Զինաց հիւսիսային սահմաններն և Ինդիլիի նեղուցին վրայ հաստատ բնակութիւն հաստատելու պատրաստուելէ ղատ՝ Քորէայի վրայ ևս իր իշխանութիւնը կը տարածէ և գրեթէ անոր տէրն է։

Արդարև Ռուսիա ծանր այլ հաստատ ու անընդհատ քայլով միշտ իր նպատակին դիմելու վրայ է, և մոռցած չէ նաև Պալթիկ վրայի ջրանցքի միջոցաւ Սև ծովուն միացնելու ծրագիրն, որ գարնան գործադրութեան պիտի դրուի։ Ռիկա և Տունա և Տներեր գետերն արդէն մեծ դիւրութիւն ընծայելով այդ կարևոր ձեռնարկին։

Ահա այս յանկարծական գրաւումները բաւական կ'յուզեն եթէ ոչ եւրոպական դահլիճներն՝ որոց հոտառութիւնը չատ սուր է, այլ ժողովուրդներն ու մամուլն, որ իսկոյն ձայն կը հանեն թէ Զինաստանի բաժանման գործն սկսած է, որպէս թէ Տէյլի Նէ-ի գրածին պէս հաւկիթ մը կը բաժնեն, թէ Ֆրանսա գրաւած է Հայնան մեծ կղզին, Անգլիա Բորդ – Համիլդըն, Իտալիա Եանկցէ գետին մօտակայ կղզիներն, և Սպանիա ու Աւստրիա մարտանաւներ կ'թռցնեն որպէս զի աւարէն իրենք ալ բաժին մը կորզեն։ Այս ամեն ձայներն անհիմն ելան, և Զին՝ իր տուարութեամբը՝ դեռ հաղիւ կ'զգայ թէ իր երկնային խոչը նկանակէն մի քանի փոքրիկ փշուրներ ագռաւները կտցած են։ Բայց Ճարոն ու Անգլիա բաւական մեծկակ ծակ մը բացուած կը տեսնեն, և մինչ անտարբեր պիտի մնա՞ն ի հարկէ՝ Ճարոն՝ որ ստիպուեցաւ Բորդ–Արթիւրէ հեռանալ, որ ուրիշներն ուտեն, իր ձեռքն ունի տակաւին Ուէյ Հայ Ուէյի ամրոցն Բորդ–Արթիւրէ 70 հազարամէղրով հեռի, սակայն կ'պարտաւորի սպասել, դաշնակից դտնել, իր նաւատորմիղը զօրացնել, ինչպէս որ արդէն 30ի չափ մարտանաւ ապսպրած է, և ապա վերջնական ոտրոշում մ'ընել վտանգին առջև առնելու համար։ Իր բնական դաշնակիցն Անգլիա կ'երևի, և Անգլիա ի՛նչ դիրք բռնած է այս երկրակալական չարժումներուն առաջն։ Ձիշտ այն դիրքն զոր կ'բռնէ տէրութիւն մ'երբ արդէն իր կռնակն ունի գաղթային բաւական ծանր բեռներ և մարտական գործողութիւններ։ Բազմազրաղ է Անգլիա, այլ խորագէտ։ Քաջ գիտէ թէ իր նաւային զօրութիւնն ի՛նչ կշիռ ունի միւս տէրութեանց վրայ, գիտէ թէ իր ձերքն է՝ ինչպէս Միջերկրականի, նոյնպէս Հնդկական և Զինական ծովերուն բանալին, այնպէս որ՝ մինչ-

դեռ մէկ կողմէ առ հարկի հաւանութեան նշաններ ցոյց կտայ Գերմանիոյ և Ռուսիա, միւս կողմէ Չինու մէջ իր առևտրական շահերը պաշտպանելու և ազատայ պատահականութեանց առջև պատրաստ գտնուելու համար, Միացեալ-Նահանգաց հետ համաձայնութիւն մը դոյացնելու և Ճաբոնի հետ դաշն դնելու միջոցները կ'փնտռէ լուելեայն։ Իսկ բոլոր աշխարհի առջև իր բռնելիք քաղաքականութեան ընդհանուր գծերը կ'պարզէ անուանի քաղաքագէտներու բերնով՝ քաղաքականութիւն՝ ոչ ազատական լայն սկզբանց վրայ, այս է ազատ վաճառականութեան վրայ կ'կայանայ, և Պ. Պալֆուր իր պաշտօնակիցներուն հետ կ'յայտարարէ թէ ցորչափ Չինու նաւահանգիստները բաց մնան բոլոր ազգերու, և յատկապէս Անգլիոյ առևտուրին համար, Բրիտանական տէրութիւնն իր սպասողական ընթացքը պիտի շարունակէ, բայց եթէ երբէք Գերմանիա և Ռուսիա յանդգնին Չինն իրենց վերապահել և դաշնագրութեանց ուժով իր վայելած իրաւանցը ջնասել, այն ժամանակ առիւծը պիտի գոռայ և Ալպիոն իր չանթերը պիտի արձակէ։ Իրաւ է որ Անգլիա իսկզբան փորձ փորձեց Փորդ-Արթիւրի մօտ գտնուած Դալիէնվանը գրաւել և ազատ նաւահանգիստ հրատարակել, իրաւ է որ Ռուսիա և Գերմանիա կ'ապահովեն թէ մաքսային ոևէ արգելք չպիտի դնեն ապրանաց ներածութեան դէմ, իրաւ է որ առ երեսս համաձայնած կ'երևին չահակից տէրութիւններն, սակայն Դալիէնվանի գրաւումը կ'յետաձգուի, և Բէքին հակամարտ չահերու և դիւանագիտական ծանր պայքարի մը կայանը դարձած է առ այժմ Չինական փոխառութեան առթիւ, տէրութեանց դեսպաններու կողմէ այս մասին առաջարկներ և հակառաջարկներ լինելով, թէև Պ. Դրզսն, յայտարարած է թէ Անգլիա պիտի յաջողի Չինու փոխ տալ 16 միլիոն ոսկի առանց ոևէ երաշխաւորութեան, չնչուչտ գերազչիռ ապդեցութիւն մ'ունենալու նպատակաւ Երկնային պետութեան վրայ։ Բայց Չնդկաստանի հիւսիսային սահմաններն, ինչպէս նաև կեդրոնական և արևմտեան Ափրիկէի մէջ Անգլիոյ դժուարութիւնները վերջացած չեն տէրվեչներու և Ֆրանսայի հետ, թէև անգլիական զօրքերն նուաճած են Չնդիկ սահմանագլխի ապստամբ Օրաքզաններն և Բէշաուր և Պարայի հովիտը կ'դիմեն ձերբելու, սակայն մերթ ընդ մերթ յանկարծական յարձակումներ Ափրիտիներու կողմէ պղտի վնասներ կ'հասցնեն Չնդկային գումարտակներու և լո-

քարտ հրամանատարն դեռ ևս վերջնական հարուածը տալով՝ անդորրութիւնը չէ հաստատած։ Ֆրանսա, որ այս չինական շըվոթութեանց առջև՝ ակնդէտ կ'սպասէ յարմար առթի մ'որպէս զի, եթէ ոչ հեռաւոր նոր պատառ մը կորզելու Զինէն, գէթ Թոնքիքի սահմաններն ընդարձակէ, ներքին ազատ խնդիրներով անդադար կ'յուզուի, և Բանամայի կաշառակերութեան դատին գրեթէ վերջ տալէն և՝ բաց ի Մաքէէ որ բացակայ է, ամբաստանեալ հին երեսփոխաններ անպարտ արձակելէ ետև՝ Տրէյֆիւս – Էսդէրհազիի կնճռոտ խնդրով կ'զբաղի, խնդիր՝ որ քաղաքական ծանր կերպարան մը կ'առնու, եսլերելի վէճերու, և կռիւներու դիպիւռ տալով ազգային ժողովին և խուժանին մէջ։ Պ. Մէլինի նախարարութիւնը կ'ամբաստանուի իբրև պաշտպան Տրէյֆիւսը դատապարտող գազանի դինուորական տուեալներին, Էսդէրհազի կոմսն՝ իբրև հեղինակ Տրէյֆիւսի դատապարտութեան գործին, Տրէյֆիւս՝ իբրև անմեղ զոհ դատադրութեանց, և ի վերջ՝ կոմսն անմեղ կ'հրատարակուի։ Զօլա՝ ս ա Նախագահն ուղղած ծանր նամակին պատճառաւ՝ որ Տրէյֆիւսի դատին վերաքննութիւնը կ'պահանջէր, ի դատ կ'կոչուի, և դատը կ'շարունակուի, իսկ կառավարութիւնը կ'մերժէ հրապարակ հանել Տրէյֆիւսի դատապարտութեան թղթերն, և Մէլին՝ իբրև վճռոտ մէջ բերելով հրաժարման սպառնալիքն՝ վստահութեան քուէ կ'ստանայ և խնդիրը միշտ քօղի տակ կ'մնայ։ Հակառեմական տարրն այս առթիւ նորէն գլուխ կ'վերցնէ Ֆրանսայի կղերին և պահպանողական կուսակցութեան հետ և բուռն հալածանք մը կ'սկսի հրէից դէմ ոչ միայն Ֆրանսայի մի քանի քաղաքներու այլ և Ալժէրիի մէջ։ Այս ամենը ցոյց կուտան թէ ինչպէս արդարութեան դատը ի Ֆրանսա կ'պաշտպանուի, երբ կուսակցական ոգին, կիրքն և անձնահ քաղաքականութեան մը դաւերը կ'յուզեն միտքերը և խղճերը կ'կուրացնեն։

ԾԱՆՔ

Հոգ. Որբանոցին՝ ի յիշատակ Օր. Թագուհի Տամկաճեանի։

Ազգի Տիկին Ն. Ս. Սիմրիսարեան	1 ոսկի
Տիկին Մ. Ագճաւորեան	1 »
« Գ. Չիլինկիրեան	1 »
« Բ. Պ. Յակոբեան	3 մճռ.
« Զ. Կ. Գուլումճեան	3 »
Օր. Մ. Սիմրիսարեան	3 »

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԳՐԱՏՈՒՆ
—1895—

ՏՈՂԵՐՔ

1888

ԿԱԶՄԱՏՈՒՆ
—1897—

Բաց է առեմ օր
8 կ. Ա. — 3 կ. Ե.

Բաց է կիրակի օր
10 - 12 կ. Ա.

Իզմիր, Մօտա փողոց, թիւ 4, Ս. Աստիսանեան Եկեղեցիին դիմաց

Մ. Մամուրեան

ԹՄԲԱԳԻԲ-ՏԵՕՐԷՆ — ԱՐԻՒՆԱՆ ՄԱՍԱՆ — 1871

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ ՏՈՂԵՐԱՆԻՆ *մէջ կը տպուին գանազան Գիրքեր, Մեծատակներ, Եկեղեցգիրքեր, Ընծայատարութիւններ, Հոգեբուգիրքեր, Հաշուեցոյցակներ, Ընկերագիրներ, Փոխատուիչգիրներ, Փարթերներ, Յանձնակատարներ, Հարսնեցգիրներ, Մանուագներ, Սղագնեռուներ, Հարսանեկան կամ Ծուղարկաւորութեան Ժապաւեններ (սեւ եւ ոսկեզօծ), եւ այլն, եւ այլն: Ապա՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ. Եկեղեցական գիրքեր եւ աւելի տեսակ երգեր եւ այլն:*

Կը յանձնուին փութով եւ ամենայն՝ մաքուր ու ճաշակաւոր.

ԹՈՒՄԲԷՔԵԱՑ ԳԻՐՔՕՋՆԵՐՆ մէջ կը ճանաչին Հոչակեալ **ԱՄԵՆ** մէկը (Գոռոմ, Գիւրան, Վէրան եւ Գաղտնական), Թէ՛ Տանկատաճի եւ թէ՛ Պրուսացիմաճի մէջ տպուած, — որոնց մուտքը սահմանէ արգիլուած չէ Թուրքիա. Նմանպէս կ'ընդունուին նաեւ Ճանապարհորդական Ճաշկերոյթներ, Ճաշկերոյթներու Ճաշկերոյթներ, Ճաշկերոյթներ, Ճաշկերոյթներ.

Կը յանձնուին փութով ու ճշտութեամբ՝ Գեղատիպերէ եւ Արուեստանոցէն եկած աւելի յանձնարարութիւններ, մեծ թէ փոքր:

ՄԱՄՈՒԲԵԱՆ ՆԱԶԱՐՈՒԹԻՒՆԸ *մէջ կը կազմուին* **ԱՄԵՆ** *չեզուկ* **ԱՄԵՆ** *տեսակ գիրք մեծ թէ փոքր, վանաստականական տուփեր, նուագատետրներ, եւ այլն, եւ այլն, թէ պարզ եւ թէ փարաւոր կազմով (Ֆրանսական եւ Անգլիական ձեւ), թղթակազմ, չարտակազմ, կաշեկազմ եւ բուշակազմ կամ ոսկեզօծ փարաւոզմ:*

Կը յանձնուին փութով ու ճաշակաւոր.

ԱԺԱՆ ԳԻՆԵՐ !!! ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ !!!

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՍԳՄԼԱՑ

Թղմիրի համար	տարեկան	3 1/2	ոսկ. ֆռնկ
» » Վիեննայեայ		2	» »
Ազգ վարժապետներու	»	2 1/2	» »
Ե. Պօղոյ եւ Փորր Ազիոյ	»	4	» »
» » »		2	» »
Ազգ. վարժապետներու	»	3	» »
Ներսատոսի համար	»	8	թուրպի ֆէնէրտաշ.
» » »		4	» »
Եւրոպայի »	»	17	ֆրանկ
» » »		8 1/2	»

ԿԱՆԽԻՆ ՎՃԱՐԵԼԻ

Հասցէ՝

Մ. Մամուրեան — ԻԶՄԻՐ

M. Mamourian — Smyrne

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

ԿՊՕԼԻՍ —	Մեծ. Սմբատ Լճ. Գաղաթիկ. Գաղատիկք խան թիւ 46 պահճի Գաղիա.
ՄԱՂՆԻԱՆ —	Մեծ. Սիրաքի Լճ. Էրկանճեան
ԷՕՏԷՄԻՇ —	Մեծ. Տիրան Լճ. Պէճաքրճեան
ՍԱՄՍՈՆ —	Մեծ. Նշանեան Լճ. Քարքաճեան
ՆՐԻԶԱՆ —	Մեծ. Տիգրան Տէր Պետրոսեան
ՆՐՈՒՍԱՂԷՄ —	Գեր. Տ. Յովհաննէս Խաչատրեան
ԳԱՀԻՐԻ —	Մեծ. Կարապետ Լճ. Դանատարեան
ՄԱՆՉՈՒԻՐ —	Մեծ. Տիգրան վարպետեան
ՌՈՒՍՉՈՒՔ —	Մեծ. Գառնիկ Լճ. Տէօմճեան
ՊՕՍԹՕՆ —	Մեծ. Տիրան Լճ. թաշճեան
ԵՒՒՐԻՉ —	Մեծ. Տօք. փաշաեան
ԱՏԱՆԱ —	Մեծ. Յակոբ Տ. Պօղոսեան
ՀԱԼԷՊ —	Մեծ. Յովհաննէս Լճ. թիւթիւնճեան
ԱՔՎԱՋ —	Մեծ. Միքրան Լճ. Խաչիրեան

Revue Arménienne HANTESS